



«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

Կողմերի միջև 26/07/2022թ. կնքված Ավտոմեքենայի կամավոր ապահովագրության (կասկո) թիվ MIG0004 գլխավոր պայմանագրի

Հավելված 1

Կողմերի միջև ___/___/2024թ. կնքված թիվ MIG0004-1 լրացուցիչ համաձայնագրի

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԿՈՂԸ

ԽՍԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՕՐԸ

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՕՐԸ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐ

TC750-01-02

07

02.09.2024

01.10.2024

ՀԱՍՏԱՏՈՂ

ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ Խորհուրդ

թիվ 07 արձանագրություն

02.09.2024թ.

Դ. Է. Խաչատուրով

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

[ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ](#) 3

1. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՎՈՂ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

2. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 9

3. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՎՏՈՎԱՍԿՈՒ 10

4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՆՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 16

5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՆ ՈՒՂԵԼՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 17

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՅՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 18

7. ՎՆԱՍԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ 21

8. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ 26

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 32

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ/ՎԿԱՅԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՆ
ԼՈՒԾԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ 35

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ 36

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 37

13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 399

14. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ
(ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 42

15. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) 43

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 43

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Զաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի ու համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված ԱՊՈ թիվ 0009 Լիցենզիայի հետևյալ դասերին՝

- Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային)
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

Ապահովագրական ծածկույթի կիրառելիության համար անհրաժեշտ է, որ տվյալ դասը/բաժինը նշված լինի ապահովագրության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝ համապատասխան ապահովագրական պատահարների, ապահովագրական գումարի և ապահովագրավճարի նշմամբ:

Պայմանները հանդիսանում են դրանց հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը:

Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ Ծրագիր):

Պայմաններում կամ Պայմանագրում/Վկայագրում օգտագործվող այն տերմինների համար, որոնց սահմանումները Պայմաններով տրված չեն, կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմանումները:

Պայմանագրով/Վկայագրով սահմանված Կողմերի իրավահարաբերություններում օգտագործվող տերմիններն ու սահմանումները ենթակա են մեկնաբանման Պայմանների սահմանումների համաձայն և այլ կերպ չեն կարող մեկնաբանվել, նույնիսկ եթե այլ աղբյուրներում տրված են համանման տերմինների այլ սահմանումներ:

1. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Պայմանների իմաստով ստորև ներկայացված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1.1. **Ապահովագրության պայմաններ (այսուհետ՝ Պայմաններ)**՝

Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության պայմաններ:

1.2. **Ապահովագրող՝** «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ:

1.3. **Ապահովադիր՝** ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք գրանցված են և գործում են ՀՀ օրենսդրության համաձայն, գործուևակ ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ:

1.4. **Շահառու**

1.4.1. «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում՝ Ապահովադիր կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված անձ, որն ունի ավտոտրանսպորտային միջոցը պահպանելու գույքային շահ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և իրավունք ունի ստանալու ապահովագրական հատուցում: Եթե «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու պահին Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուն չունի գույքային շահ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի պահպանման նկատմամբ, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովադիրին, եթե վերջինս ունի շահ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի պահպանման նկատմամբ: Իսկ այն դեպքում, երբ և՛ Ապահովադիրը, և՛ Շահառուն չունեն գույքային շահ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի պահպանման նկատմամբ, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է այն անձին, ով ունի նման շահ:

1.4.2. Գրավադրված ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության դեպքում Պայմանագրում/Վկայագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադիրին կամ այլ Շահառուին, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

1.4.3. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության դեպքում Շահառու է հանդիսանում ապահովագրական պատահարի արդյունքում Տուժողը:

1.4.4. Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում Շահառու է հանդիսանում Ապահովագրված անձը, նրա ժառանգները:

1.5. **Ապահովագրված անձ՝** վարորդ և/կամ ուղևորներ, որոնք գտնվում են ավտոտրանսպորտային միջոցում և որոնց գծով առկա է ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրություն:

- 1.6. Լիազորված վարորդ՝** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավտոտրանսպորտային միջոցն օգտագործելու իրավունք ունեցող գործունակ ֆիզիկական անձ, ով որպես լիազորված վարորդ նշված է ապահովագրության պայմանագրում: Լիազորված վարորդը պետք է լինի 21 (քսանմեկ) տարին լրացած ֆիզիկական անձ և ունենա համապատասխան կարգի ավտոմեքենա վարելու առնվազն 3 (երեք) տարվա վարորդական փորձ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրում/Վկայագրում Լիազորված վարորդ կարող է նշված չլինել, եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործում անսահմանափակ քանակով վարորդների կողմից:
- 1.7. Տնօնող՝** Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով անձնական կամ գույքային վնասներ կրած անձ, ով ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի վնասի հատուցում ստանալու իրավունք:
- 1.8. Ավտոտրանսպորտային միջոց (այսուհետ՝ ԱՄ)՝** Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր ավտոտրանսպորտային միջոց (այդ թվում՝ անձնական օգտագործման ավտոմեքենաներ, ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ, քարշակներ, թեթև մարդատար ավտոմեքենաներ, Էլեկտրական և հիբրիդային շարժիչով ավտոմեքենաներ), որոնք ապահովագրված են սույն Պայմանների համաձայն:
- 1.9. Ծանապարհատրանսպորտային պատահար (այսուհետ՝ ԾՏՊ)՝** ԱՄ-ի՝ ճանապարհով շարժվելու ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած դեպք, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ կամ վնասվել են ԱՄ-ներ, կառույցներ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս, ներառյալ մեկ այլ մեխանիկական ԱՄ-ի պատճառով կանգառի վիճակում գտնվող ապահովագրված ԱՄ-ին պատճառված վնասը:
- 1.10. Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝** ՀՀ օրենսդրության և Պայմանների համաձայն Ապահովագրի և Ապահովագրողի միջև կնքված գրավոր փաստաթուղթ, որում սահմանված են ցամաքային տրանսպորտի ապահովագրության (բացառությամբ երկաթուղային), ցամաքային ԱՄ-ների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության և դժբախտ պատահարներից ապահովագրության դասերով իրականացվող ապահովագրության պայմանները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համար նախատեսված պարտադիր այլ պայմանները:
- 1.11. Ապահովագրական գումար՝** Պայմանագրում/Վկայագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սակայն «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում այն չի կարող գերազանցել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքը և Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում

նվազեցվում է յուրաքանչյուր հատուցման գումարի չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

**1.12. Ապահովագրական սակագին`** Ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որը սահմանվում է Ապահովագրողի կողմից` հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:

1.13. Ապահովագրավճար` Ապահովագրության պայմանագրով սահմանված չափով, վճարման պայմաններով և ժամկետներով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է:

1.14. Ապահովագրավճարի հերթական մասի վճարում` Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող Պայմանագրերի/Վկայագրերի դիմաց մասերով կատարվող վճարումներ, որոնց չափերը, վճարման պայմաններն ու ժամկետներն Ապահովագրողի կողմից սահմանվում են Պայմանագրում/Վկայագրում:

**1.15. Չհատուցվող գումար`** Ապահովադրի մասնակցության չափն է վնասի հատուցմանը, որը հատուցման ենթակա չէ Ապահովագրողի կողմից և սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով` կոնկրետ գումարի նշամբ կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: ԱՄ-ի ոչ լրիվ արժեքով ապահովագրության դեպքում չհատուցվող գումարը նվազեցվում է ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն հաշվարկված վնասի իրական չափից: Չհատուցվող գումարի չափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում մնում է անփոփոխ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

1.16. Պայմանական չհատուցվող գումար` պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

**1.17. Ոչ պայմանական չհատուցվող գումար`** ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց` անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

1.18. Իրադարձություն/դեպք` ենթադրվող իրադարձություն (որոշակի հավանականությամբ և պատահականությամբ), որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը:

1.19. Ապահովագրական պատահար` Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

**1.20. Ապահովագրական հատուցում`** ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովադրին (Շահառուին, Ապահովագրված անձին) վճարման ենթակա գումար` դրամական արտահայտությամբ կամ հատուցում համարժեք գույքով:

- 1.21. «Համամասնական» հատուցման պայման**՝ ապահովագրական հատուցումը հաշվարկվում է կիրառելով Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերության համամասնությունը:
- 1.22. «Առաջին ռիսկի» հատուցման պայման**՝ ապահովագրական հատուցումը հաշվարկվում է առանց կիրառելու ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերության համամասնությունը, այսինքն՝ ապահովագրական հատուցումը հաշվարկվում է վնասի չափով, սակայն ապահովագրական գումարի սահմաններում:
- 1.23. Ապահովագրության տարածք**՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրությունը գործում է ՀՀ տարածքում տեղի ունեցած Պայմանագրով/Վկայագրով նախատեսված պատահարների դեպքում, եթե այլ տարածք նշված չէ Պայմանագրում/Վկայագրում:
- 1.24. Դժբախտ պատահար**՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իրադարձության տեղի ունենալու հետևանքով ԱՄ-ի մեջ գտնվող Ապահովադրի, Շահառուի և/կամ երրորդ անձի հետ տեղի ունեցած անսպասելի, հանկարծակի և անկանխատեսելի պատահար:
- 1.25. ԱՄ-ի կառուցվածքային ոչնչացում**՝ ԱՄ-ի ամբողջական և անդամալի կորուստ՝ դրա վերականգնման տեխնիկապես անհնարին լինելու պատճառով կամ երբ ԱՄ-ի վերանորոգման, վերականգնման արժեքը (ներառյալ՝ Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա ծախսերը) գերազանցում է ԱՄ-ի իրական (ապահովագրական) արժեքի 75%-ը (յոթանասունհինգ տոկոսը):
- 1.26. Ձմեռային անվադողեր**՝ ԱՄ-ի անվադողեր, որոնք հատուկ մշակված են տարվա ցուրտ ժամանակաշրջանում օգտագործելու համար, երբ օդի ջերմաստիճանը ցածր է $+7^{\circ}\text{C}$ -ից և որոնց վրա առկա է M+S կամ M+S և «Ձյան փաթիլ» նշանը:
- 1.27. Հրդեհ՝ ներառյալ այրման նյութերի, ինչպես նաև հրդեհի մարման համար օգտագործված ջրի (փրփուրի) կամ այլ նյութերի ազդեցություն**՝ վնասի պատճառում չվերահսկվող այրման հետևանքով, որը պատճառում է ֆիզիկական, գույքային վնաս անձին, նրա կյանքին ու առողջությանը, հասարակության և պետության շահերին: Այրումն առաջացնում է բոց (կրակ) և մարմանդ վառում: Հրդեհի ժամանակ ապահովագրված ԱՄ-ի վրա անուղղակի ազդեցություն են համարվում նաև կողմնակի երևույթները՝ մրոտումը (ծխոտումը), մակերեսային հալումը, հրդեհի մարման ժամանակ կիրառված ջրի (փրփուրի կամ այլ միջոցների) ազդեցությունը:
- 1.28. Պայթյուն**՝ մեծ հարվածային ուժով էներգիայի սաստիկ արագության միանվագ առաջացման արդյունքում պատճառված վնասը, որն առաջացել է որևէ քիմիական միացության կամ նյութի (տաք խառնուրդի, գազի և այլն) բաղադրության փոփոխման (քիմիական ռեակցիայի) արդյունքում: Պայթյունի արդյունքում առաջացող հարվածային ուժը (պայթյունային ալիքը) քայքայում է առարկան, ինչից առաջանում է պայթյունը, ինչպես նաև վնասներ է պատճառում ԱՄ-ին:
- 1.29. ԱՄ-ի ապօրինաբար օգտագործում**՝ Սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով կամ սպառնալիքի միջոցով նրա ԱՄ-ն օգտագործելը՝ առանց այդ գույքն իրենը դարձնելու նպատակի, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

- 1.30. Ավագակություն**՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված ԱՄ-ի հափշտակությունը:
- 1.31. Գողություն**՝ ապահովագրված ԱՄ-ի գաղտնի հափշտակությունը:
- 1.32. Կողոպուտ**՝ ապահովագրված ԱՄ-ի բացահայտ հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ:
- 1.33. Ուժեղ քամի**՝ վնասի պատճառում երկրագնդի մակերեսի նկատմամբ 14 մ/վ-ից ավելի արագությամբ կամ հորիզոնական բաղադրիչով օդի շարժման արդյունքում:
- 1.34. Փորձորիկ**՝ վնասի պատճառում շատ ուժեղ և երկարատև քամու հետևանքով, որի արագությունը գերազանցում է 32մ/վ-ը:
- 1.35. Մորիկ**՝ վնասի պատճառում 20մ/վ-ից ավելի արագությամբ երկարատև շատ ուժեղ քամու արդյունքում, որն առաջացնում է ուժեղ ալեկոծություններ ծովում և ավերածություններ ցամաքում:
- 1.36. Մորկայուն**՝ վնասի պատճառում մինչև 1000մ տրամագծով ուժգին մեծածավալ մթնոլորտային պտտահողմի արդյունքում, որի ներսում օդը պտտվում է մինչև 100 մ/վ արագությամբ, և որն օժտված է մեծ ավերիչ ուժով:
- 1.37. Հեղեղում**՝ ցամաքի ժամանակավորապես ջրածածկում, որն արդյունք է հորդառատ անձրևներից կամ ձնհալքներից ջրառաջացման բնական գործընթացի, ինչպես նաև պատվարների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների վթարման:
- 1.38. Կարկուտ**՝ վնասի պատճառում տարվա տաք ժամանակներին խիտ սառույցից սառցե մասնիկների տեսքով տեղացող մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնք սովորաբար ուղեկցվում են ամպրոպով զուգորդվող տեղատարափով:
- 1.39. Տվյալ տեղանքին ոչ բնորոշ մթնոլորտային տեղումներ**՝ հորդառատ անձրևի, ձյունատեղման, երկարատև անձրևների հետևանքով վնասների պատճառում, որոնք տվյալ տեղանքի համար հատուկ չեն և իրավասու մարմինների կողմից որակվում են որպես անսովոր:
- 1.40. Կայծակնահարում, որը չի առաջացրել հրդեհ**՝ Էլեկտրաստատիկ Էլեկտրականության պարպում, որն առաջացել է ամպերի միջև կամ երկրի մակերևույթի և ամպերի միջև (գծային կայծակ), կամ գնդաձև լույս արձակող մարմնի տեսքով (գնդակերպ կայծակ), որն անցել է ապահովագրված մարմնի տարրերի միջով և թողել է ուղղակի ջերմային, մեխանիկական կամ Էլեկտրական ազդեցություն, կամ երկրորդային ազդեցություն՝ բարձր Էլեկտրական պոտենցիալը ապահովագրված գույքի տարրերի մեջ ուղղելու տեսքով, ինչը բերել է դրա վնասմանը: Սույն Պայմաններով հատուցման ենթակա է կայծակի Էլեկտրական պարպման ջերմային ազդեցությամբ ապահովագրված գույքին պատճառված վնասը, ներառյալ՝ կայծակի հարվածային ալիքի մեխանիկական ազդեցության, կայծակի Էլեկտրական ազդեցության հետևանքով այրումից և ավիրումից ապահովագրված գույքին պատճառված վնասը:
- 1.41. Սողակք**՝ վնասի պատճառում լեռնային ապարների զանգվածների լանջով տեղաշարժվելու հետևանքով, որն առաջանում է սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ներգործությամբ՝ լանջի ողողաքանդման, ջրադինամիկ ճնշման, գերխոնավացման, սեյսմիկ կամ տեխնածին ցնցումների և այլ երևույթների հետևանքով:

1.42. Դարափուկ (քարաթափում)՝ վնասների պատճառում ձորերի զառիվայր և զառիթափ լանջերի վրայի լեռնային ապարների, մեծ զանգվածների անսպասելի պոկվելու և ընկնելու հետևանքով, որոնք հիմնականում տեղի են ունենում լեռնային ապարների կապակցվածության թուլացման հաշվին, որն առաջանում է հողմահարման պրոցեսների, մակերեսային և ստորգետնյա ջրերի գործունեության ազդեցության հետևանքով:

1.43. Սելավ՝ վնասի պատճառում ջրի և փխրուն ապարների խառնուրդից բաղկացած մեծ կործանարար ուժով սրընթաց հոսանքի հետևանքով, որը հանկարծակի առաջանում է ոչ մեծ լեռնային գետերի ավազաններում՝ ուժգին անձրևների կամ բուռն ձնհալի, ինչպես նաև անցանկալի ճեղքման արդյունքում:

1.44. Ձևահյուս՝ վնասի պատճառում զառիվար լեռնային լանջերով ձյան և (կամ) սառույցի արագ, անսպասելի առաջացած դեպի վար շարժման հետևանքով, ինչը վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար, պատճառում է նյութական վնասներ:

2. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Համաձայն սույն Պայմանների Պայմանագրով/Վկայագրով ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության («Ավտոկասկո») դեպքում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի/Ապահովագրված անձի (Լիազորված վարորդի) գույքային շահերը, որոնք կապված են Ապահովադրի/Ապահովագրված անձի (Լիազորված վարորդի) ԱՄ-ի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ և որոնք առաջանում են ԱՄ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման, կորստի կամ վնասվելու հետևանքով:

2.2. Սույն Պայմանների հիման վրա **ապահովագրման ենթակա են**՝

2.2.1. ՀՀ ՆԳՆ ՃՈ-ում հաշվառված ԱՄ-ները:

2.2.2. ՀՀ ավտոսրահներում վաճառվող, սակայն ՀՀ ՆԳՆ ճանապարհային ոստիկանությունում չհաշվառված նոր ԱՄ-ները: Այս դեպքում ապահովագրված ԱՄ-ի «Կորուստ» իրադարձության գծով ապահովագրությունն սկսում է գործել ԱՄ-ն ճանապարհային ոստիկանությունում գրանցելու/հաշվառելու պահից:

2.2.3. Օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների կողմից հաշվառված ԱՄ-ները, որոնք ապահովագրված են համարվում միայն ՀՀ տարածքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

2.3. Ապահովագրման ենթակա չեն այն ԱՄ-ները, որոնց նկատմամբ պահպանված չեն մաքսային հայտարարագրման կանոնները, որոնք ՀՀ տարածք են ներկրվել գործող մաքսային նորմերի և կանոնների խախտմամբ կամ որոնք գրանցված են ՀՀ պետական կառավարման մարմինների և Ինտերպոլի տեղեկատվական տվյալների բազայում որպես նախկինում գողացված: Սույն կետում նշված դրույթի խախտմամբ կնքված Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողը չի կրում Պայմանագրով նախատեսված որեւէ պարտավորություն, այդ թվում՝ ապահովագրական հատուցման պարտականություն/պարտավորություն և ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ:

2.4. Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ապահովագրման ենթակա ԱՄ-ն ունի վնասներ, ապա Ապահովագրողն ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի չափը նվազեցնում է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին առկա վնասի համապատասխան չափով: Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրողը վերականգնում է ԱՄ-ի վնասը, ապա նա պարտավորվում է վնասը վերականգնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ԱՄ-ն ներկայացնել Ապահովագրողին՝ զննման, ինչի արդյունքում Ապահովագրողը պարտավոր է կազմել համապատասխան փաստաթղթեր, որը պետք է ստորագրվի Ապահովագրողի և Ապահովագրի կողմից և հիմք ընդունվի հնարավոր պատահարի հետ կապված ապահովագրական հայտի կարգավորման ժամանակ:

3. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԱՎՏՈՎԱՍԿՈՒ

3.1. Պայմաններով ապահովագրական պատահար են համարվում ԱՄ-ի ոչնչացումը, վնասումը կամ կորուստը հետևյալ իրադարձությունների տեղի ունենալու արդյունքում՝

3.1.1. Վթար՝ Պայմաններով վթար է համարվում ԱՄ-ի վնասումը կամ ոչնչացումը ճՏՊ-ի արդյունքում, այդ թվում՝ ճՏՊ-ի արդյունքում ԱՄ-ի այրվելը, այլ ԱՄ-ի, շարժական, անշարժ առարկաների (այդ թվում՝ կառույցների, արգելքների) հետ բախվելը կամ մարդկանց, կենդանիների հետ բախվելը և/կամ վրաերթի ենթարկելը, շրջվելը, ԱՄ-ի վրա որևէ առարկայի վայր ընկնելը, այդ թվում՝ ծառերի, ձյան և սառույցի, ջրի մեջ ընկնելը:

3.1.2. Էլեկտրական խափանում՝ Էլեկտրական ԱՄ-ների լիցքավորման ընթացքում կարճ միացման կամ դրա հետ կապված այլ խափանում: Վերջինս հատուցվում է միայն Պայմանագրում/Վկայագրում ներառված լինելու դեպքում:

3.1.3. Տարերային աղետներ՝ ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, մրրկասյուն, հեղեղում, կարկուտ, տվյալ տեղանքին ոչ բնորոշ մթնոլորտային տեղումներ, կայծակնահարում, որը չի առաջացրել հրդեհ, սողանք, դարափուկ (քարաթափում), սելավ, ձնահյուս:

3.1.4. Հրդեհ՝ ներառյալ այրման նյութերի, ինչպես նաև հրդեհի մարման համար օգտագործված ջրի (փրփուրի) կամ այլ նյութերի ազդեցություն, պայթյուն:

3.1.5. Երրորդ անձանց հակաիրավական գործողություններ՝ հրկիզում, պայթյուն, ինչպես նաև ԱՄ-ի առանձին մասերի վնասում:

3.1.6. Ապահովագրված ԱՄ-ի կորուստ՝ ԱՄ-ի ապօրինաբար օգտագործման, գողության, կողոպուտի, ավազակության, երրորդ անձանց կողմից դրա դիտավորյալ ոչնչացման արդյունքում:

3.2. Պայմանագրով/Վկայագրով ԱՄ-ն կարող է ապահովագրվել իրադարձությունների հետևյալ խմբերից՝

3.2.1. Վնաս՝ ապահովագրված ԱՄ-ին պատճառված վնաս կամ դրա ոչնչացում սույն Պայմանների 3.1. կետում թվարկված (բացառությամբ 3.1.6 ենթակետում նշված) իրադարձությունների տեղի ունենալու արդյունքում,

3.2.2. Կորուստ՝ ապահովագրված ԱՄ-ի կորուստ սույն Պայմանների 3.1.6. ենթակետում թվարկված իրադարձությունների տեղի ունենալու արդյունքում,

3.2.3. Ավտոկասկո՝ ԱՄ-ին պատճառված վնասը, որա ոչնչացումը կամ կորուստը միաժամանակ «Վնաս» և «Կորուստ» իրադարձությունների խմբերից:

3.3. Ռիսկի աստիճանի փոփոխություն

3.3.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ԱՄ-ի օգտագործման նպատակի փոփոխման վերաբերյալ՝ նախապես, հայտնել պայմանագիրը կնքելիս սույն Պայմաններով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված և (կամ) Ապահովադրի կողմից ներկայացված (հայտարարված) այն տեղեկություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք հիմք են ընդունվել Պայմանագրի/Վկայագրի կնքման (փոփոխության) համար, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա, այդ թվում ստորև նշված հանգամանքների մասին՝

3.3.1.1. ԱՄ-ի օտարում, գրավադրում և/կամ տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքի այլ սահմանափակում,

3.3.1.2. Համարակալված մասերի փոփոխություն (թափք, շարժիչ, հաշվառման համարանիշ և այլն),

3.3.1.3. ԱՄ-ի բանալիների կամ ԱՄ հաշվառման փաստաթղթերի՝ (ԱՄ-ի հաշվառման վկայագրի, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) կորուստ,

3.3.1.4. ԱՄ-ի օգտագործման նպատակի փոփոխում (օրինակ՝ ԱՄ-ն նախկինում օգտագործվել է անձնական նպատակներով, սակայն հետագայում օգտագործվելու է նաև որպես տաքսի (որոշակի վճարի դիմաց ուղևորներ, բեռներ տեղափոխելու կամ այլ առևտրային բնույթի նպատակով) և այլն:

3.4. Եթե պատահարը տեղի է ունեցել ԱՄ-ն այնպիսի անձի կողմից վարելու դեպքում, ում տարիքը փոքր է եղել 21-ից (քսանմեկից) կամ ով չի ունեցել համապատասխան կարգի ԱՄ-ն վարելու առնվազն 3 (երեք) տարվա վարորդական փորձ, Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրում/Վկայագրում նշված չհատուցվող գումարի չափը կրկնապատկել, իսկ Պայմանագրում/Վկայագրում չհատուցվող գումար նշված չլինելու դեպքում կիրառել չհատուցվող գումար՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված ԱՄ-ի ապահովագրական գումարի 1.5%-ի (մեկ ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով:

3.5. Ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջել փոփոխելու Պայմանագրի/Վկայագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

3.6. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

3.6.1. Ապահովագրված ԱՄ-ի բանալիների կորուստը

3.6.2. ԱՄ-ի ներկածածկի վնասումը (այդ թվում՝ ավազի, փոքր չափի քարերի, ծառերի կամ թփուտների ճյուղերի ներգործության, ԱՄ-ի լվացման հետևանքով), որը թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական չափերի ձևախախտման չի հանգեցրել

- 3.6.3.** Մարտկոցի կամ այլ էլեկտրասարքավորումների վնասումը թույլ միացման հետևանքով
- 3.6.4.** ԱՄ-ի հայելիների, անվադողերի, անվասկավառակների, անվահեծերի և/կամ դեկորատիվ ծածկերի/կափարիչների հափշտակելը
- 3.6.5.** ԱՄ-ի մասերի կորուստը, եթե ապահովագրական պատահարի ժամանակ դրանք գտնվում էին ապահովագրված ԱՄ-ից դուրս
- 3.6.6.** ԱՄ-ի հաշվառման համարանիշի կորուստը կամ վնասումը
- 3.6.7.** Էլեկտրասարքերի, մեխանիկական հանգույցների անսարքությունը, այդ թվում՝ էլեկտրահաղորդալարերի թերությունը, ԱՄ-ի այլ մասերի, հանգույցների և ագրեգատների կոտրումը, խափանումը, շարքից դուրս գալը, եթե վերջիններս Պայմանագրում/Վկայագրում ներառված իրադարձությունների հետևանք չեն
- 3.6.8.** Լրացուցիչ սարքավորումներին պատճառված վնասը և կորուստը: Լրացուցիչ սարքավորումներ են համարվում ԱՄ-ի մեջ կամ դրա վրա տեղադրված սարքավորումների/բաղադրիչների տեսակները, որոնք ի սկզբանե նախատեսված չեն եղել արտադրողի կողմից
- 3.6.9.** Կենդանիների կողմից ԱՄ-ին պատճառված վնասները, եթե դրանք Պայմանների 3.1.1. ենթակետով նախատեսված իրադարձությունների հետևանք չեն
- 3.6.10.** ԱՄ-ի բեռնավորման, բեռնաթափման կամ ցանկացած տեսակի փոխադրամիջոցով տեղափոխման (բացառությամբ՝ ապահովագրված ԱՄ-ն ճանապարհային երթևեկության կանոնների պահպանմամբ քարշակելու դեպքի) հետևանքով պատճառված վնասները
- 3.6.11.** Բացառապես դիմապակուն պատճառված վնասը կամ դրա հափշտակումը
- 3.6.12.** ԱՄ-ով երթևեկելու ընթացքում ԱՄ-ի վարորդի երթևեկելը հանդիպակաց երթուղով, որտեղ արգելված է երթևեկությունը կամ հատելը հանդիպակաց երթուղին բաժանող հոծ գիծը և/կամ հետադարձ կամ շրջադարձ կատարելը, և/կամ արգելված վայրերում հետընթաց կամ շրջադարձ կամ հետադարձ կատարելը
- 3.6.13.** Ապահովադրի կամ Լիազորված վարորդի՝ ԱՄ-ով մուտք գործելը լուսացույցի կարմիր արգելող ազդանշանի տակ
- 3.6.14.** ՃՏՊ ժամանակ ԱՄ-ի գտնվելը առանց համապատասխան կառավարման. ԱՄ-ի վարորդի ուշադրությունը զբաղված է եղել բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ նմանատիպ ակսեսուարներով
- 3.6.15.** ԱՄ-ն օգտագործելիս փակ և միակողմանի փողոցների նշանների պահանջները խախտելը
- 3.6.16.** Ճանապարհածածկի վրա առկա անհարթությունների հետևանքով ԱՄ-ին պատճառված վնասը կամ ԱՄ-ի ոչնչացումը

3.6.17. ԱՄ-ով թունավոր կամ պայթուցիկ նյութերի փոխադրման արդյունքում առաջացած վնասները

3.6.18. ԱՄ-ի սահմանված (թույլատրված) արագության ավելի քան 50%-ով (հիսուն տոկոսով) գերազանցելու արդյունքում առաջացած վնասները

3.6.19. ձայնային կամ գերձայնային արագությամբ ընթացող ինքնաթիռի կամ այլ թռչող ապարատի առաջացրած ճնշման ալիքների արդյունքում առաջացած վնասները

3.6.20. ԱՄ-ում մշտապես տեղադրված միայն ռադիոյի կամ հեռահաղորդակցության սարքի կորուստը կամ վնասը:

3.7. Համաձայն սույն Պայմանների՝ **ապահովագրական պատահար չեն համարվում և չեն հատուցվում** ստորև թվարկվածների հետևանքով պատճառված վնասները՝

3.7.1. շորթման, խարդխության հետևանքով տեղի ունեցած պատահարների

3.7.2. Ապահովագրի (Շահառուի) կամ Լիազորված վարորդի կողմից պատահարի պատճառների բացահայտմանը և վնասի չափի որոշմանը խոչընդոտելու

3.7.3. Ապահովագրված ԱՄ-ի վարորդը ուղեխցիկում չգտնվելու, ԱՄ-ի կանգառի ժամանակ ԱՄ դռները կամ պատուհանները բաց թողնելու (չկողպելու)

3.7.4. վարորդով, ուղևորներով և բեռով բեռնված, լրակազմված ու լիցքավորված ԱՄ-ի զանգվածը արտադրող կազմակերպության կողմից սահմանված առավելագույն թույլատրելի զանգվածը գերազանցելու

3.7.5. ԱՄ-ի շարժիչը տաքացնելու համար բաց կրակի աղբյուրները օգտագործելու

3.7.6. ԱՄ շահագործման ժամանակ դրանց արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կանոնները խախտելու

3.7.7. ԱՄ-ի օգտագործման/շահագործման ժամանակ հակահրդեհային անվտանգության կանոնները խախտելու

3.7.8. Պայմանագրում/Վկայագրում որպես Լիազորված վարորդ չնշված անձի կողմից կամ օրինական հիմքերի բացակայության պայմաններում Ապահովագրված ԱՄ-ն շահագործելու (վարորդը զրկված է վարելու իրավունքից, չի ունեցել ապահովագրված ԱՄ-ն վարելու իրավունք կամ ուղեգիր կամ վարորդական իրավունք կամ ԱՄ-ն վարելու համար օրենսդրությամբ պահանջվող այլ փաստաթուղթ կամ ԱՄ-ի շահագործումն արգելված է ՀՀ օրենսդրությամբ)

3.7.9. ՃեԿ-ի կանոններով սահմանված ԱՄ-ների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկով նախատեսված անսարքություններով և պայմաններով ԱՄ-ի վարելու

3.7.10. ԱՄ-ի անվադողերի, անվասկավառակների և դրանց ծածկոցների վնասումը, եթե այն չի զուգորդվում այլ վնասների հետ

3.7.11. ԱՄ-ում գազի սարքավորման (բալոն և այլն) պայթյունի կամ դրանում առկա գազի արտահոսքի արդյունքում ԱՄ-ի պայթյունի հետևանքով առաջացած վնասները, այդ թվում՝ երրորդ անձանց պատճառված վնասները

3.7.12. ԱՄ-ի գործարանային խոտանի կամ նորոգման ժամանակ կատարված խոտանի հետ կապված վնասները

3.7.13. ԱՄ-ի այն դետալների, հանգույցների վերանորոգումը կամ նորով փոխարինումը, որոնք վնասված, ջարդված են եղել մինչև պատահարի տեղի ունենալը: Եթե պատահարի արդյունքում արդեն իսկ վնասված դետալները, հանգույցները Էլ ավելի են

վնասվել, Ապահովագրողը հատուցում է միայն պատահարի հետևանքով առաջացած վնասի վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի և մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալն առկա վնասի վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի դրական տարբերության չափով

3.7.14. ԱՄ-ի շահագործման արդյունքում բնական մաշվածությունը

3.7.15. վերանորոգումից հետո ԱՄ-ի ապրանքային, շուկայական արժեքի կորուստը կամ նվազումը

3.7.16. Ապահովագրողը կամ Լիազորված վարորդը ԱՄ-ն վարելիս գտնվել է ոչ սթափ վիճակում (Ապահովագրողի կամ Լիազորված վարորդի օրգանիզմում ալկոհոլի որոշակի չափի, ինչպես նաև թմրանյութերիկամ հոգեմետ նյութերի առկայություն, որի դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն) և/կամ խուսափել կամ հրաժարվել է սթափության զննություն անցնելուց

3.7.17. Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած պատահարը

3.7.18. մրցույթներում, փորձարկումներում, ուսումնական նկատառումներով ապահովագրված ԱՄ-ն օգտագործելու հետևանքով պատճառված վնասը, վարձակալության տրամադրելու, որոշակի վճարի դիմաց ուղևորներ տեղափոխելու նպատակով օգտագործելու հետևանքով պատճառված վնասը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ

3.7.19. +7 °C օդի ջերմաստիճանից ցածր օդի ջերմաստիճանի պայմաններում ձմեռայինից տարբեր անվադողերով ԱՄ-ն օգտագործելու հետևանքով պատճառված վնասը, այն դեպքում, երբ +7 °C օդի ջերմաստիճանը պահպանվել է վերջին 3 օրերի ընթացքում, բացառությամբ, երբ ԱՄ-ն վնասման պահին գտնվել է անշարժ և/կամ կայանված վիճակում (անկախ շարժիչի գործարկված լինելու հանգամանքից)

3.7.20. +7 °C օդի ջերմաստիճանից ցածր օդի ջերմաստիճանի պայմաններում ԱՄ-ի ձմեռային անվադողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը 4մմ-ից պակաս լինելու պարագայում ԱՄ-ն օգտագործելու հետևանքով պատճառված վնասը, այն դեպքում, երբ +7 °C օդի ջերմաստիճանը պահպանվել է վերջին 3 օրերի ընթացքում, բացառությամբ, երբ ԱՄ-ն վնասման պահին գտնվել է անշարժ և/կամ կայանված վիճակում (անկախ շարժիչի գործարկված լինելու հանգամանքից)

3.7.21. ապահովագրական պատահարի ժամանակ ԱՄ-ում գտնվող իրերին կամ սարքավորումներին պատճառված վնասը, որոնց ապահովագրությունը նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով

3.7.22. այն վնասների և թերությունների վերացման ծախսերը, որոնց մասին մինչև ապահովագրական պատահարի առաջանալն Ապահովագրողին չէին տեղեկացրել

3.7.23. մինչև ապահովագրված ԱՄ-ն ապահովագրելը դրանում առաջացած վնասների և թերությունների վերացման ծախսերը

3.7.24. Ապահովագրված ԱՄ-ի բացակայության (վերանորոգում և այլն) ընթացքում դրա փոխարինման ծախսերը

3.7.25. վնասը, որը պատճառվել է վարորդի և/կամ ուղևորների գույքին, որը գտնվել է ԱՄ-ում ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ

- 3.7.26.** ԱՄ-ին և/կամ Լիազորված վարորդին՝ Ապահովագրված անձի կողմից պատճառված վնասը
- 3.7.27.** ԱՄ-ն ապահովագրական պատահարից առաջ անսարք վիճակում, պատահարի պատճառ հանդիսացած թերություններով շահագործելու հետևանքով առաջացած վնասը
- 3.7.28.** վնասը, որը պատճառվել է երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով Ապահովադրի (Ապահովագրված անձի) կառավարումից դուրս հայտնված ԱՄ-ի կողմից
- 3.7.29.** ԱՄ-ին պատճառված վնասը, եթե ապահովագրական պատահարի շրջանակներում ԱՄ-ն Ապահովադրի կողմից հանձնվել է վերանորոգման՝ առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության և վնասի չափի հետ Ապահովագրողը համաձայն չէ
- 3.7.30.** ԱՄ-ի տեխնոլոգիական կամ տեխնիկական անհրաժեշտությունից չբխող աշխատանքների (չվնասված մակերեսների ներկում, վերանորոգման փոխարեն պահեստամասերի փոխարինում և այլն) իրականացման գծով ծախսերը
- 3.7.31.** բաց թողնված օգուտը, պարապուրդը, եկամտի կորուստը, Ապահովադրի (Լիազորված վարորդի) և Շահառուի այլ անուղղակի և առևտրային կորուստները, վնասները և ծախսերը, օրինակ՝ տուգանքներ, ապահովագրական պատահարի կարգավորման ընթացքում հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսերը, հեռախոսային խոսակցությունները, ապրանքների մատակարարման և ծառայությունների տրամադրման ժամկետների խախտման հետ կապված կորուստները և այլն
- 3.7.32.** Ապահովադրի աշխատողներին պատճառված վնասը (եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ) և/կամ նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով օգտագործվող գույքին պատճառված վնասը
- 3.7.33.** Ապահովադրի/Լիազորված վարորդի ընտանիքի անդամներին (սույն կետի իմաստով ընտանիքի անդամներ են համարվում ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը, վերջիններիս ամուսիններն ու երեխաները), խնամակալներին, ինչպես նաև այն քաղաքացիներին և/կամ նրանց գույքին պատճառված վնասը, ովքեր Ապահովադրի հետ հաշվառված են միևնույն հասցեում (եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ)՝ բացառությամբ վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքի
- 3.7.34.** շրջակա միջավայրին պատճառված վնասը
- 3.7.35.** հնաոճ և այլ յուրօրինակ առարկաներին, պատմամշակութային նշանակության շենքերին և կառույցներին, թանկարժեք մետաղներից և թանկարժեք, կիսաթանկարժեք քարերից պատրաստված իրերին, կանխիկ դրամին, արժեթղթերին, կրոնական պաշտամունքի առարկաներին, ինչպես նաև գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններին, այլ մտավոր սեփականության օբյեկտներին պատճառված վնասը կամ դրանց ոչնչացումը
- 3.7.36.** երկրաշարժի հետևանքով ապահովագրված օբյեկտին պատճառված վնասը:

4. ԱՎՏՈՏՐԱՆՍԴՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 4.1. Ապահովագրության օբյեկտ** են հանդիսանում Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) գույքային շահերը՝ կապված ԱՄ-ի օգտագործումից բխող Ապահովադիր կամ լիազորված վարորդի քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Պայմանագրում/Վկայագրում նշված տարածքում ԱՄ-ի օգտագործումից երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասների հետևանքով:
- 4.2.** Սույն բաժնի համար ապահովագրության տարածք է համարվում միայն ՀՀ-ն, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
- 4.3.** Պայմանագրում/Վկայագրում կարող են նախատեսվել առանձին ապահովագրական գումարներ՝
- 4.3.1.** Տուժողի կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար (անձնական վնաս),
- 4.3.2.** Տուժողի գույքին պատճառված վնասի համար (գույքային վնաս):
- 4.4. Ապահովագրական պատահարներ և ապահովագրության լրացուցիչ պայմաններ**
- 4.4.1.** Համաձայն սույն Պայմանների ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրում/Վկայագրում նշված ԱՄ-ի օգտագործման ընթացքում Ապահովադիր և/կամ Լիազորված վարորդի կողմից վթարի արդյունքում Տուժողի կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասի համար քաղաքացիական պատասխանատվության առաջացումը, որը հանգեցնում է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում կատարելու պարտականության առաջացմանը.
- 4.4.1.1.** եթե ՃՏՊ-ն տեղի է ունեցել 2 (երկու) և ավելի վարորդների մեղքով, որոնցից մեկը հանդիսանում է Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովադիր և/կամ Լիազորված վարորդի մեղքի աստիճանին համամասնորեն: Այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշել վարորդներից յուրաքանչյուրի մեղքի աստիճանը, ապա այդ անձինք Տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն,
- 4.4.1.2.** եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցումը պետք է վճարվի մի քանի Տուժողների, և տվյալ ապահովագրական պատահարի գծով Ապահովագրողին ներկայացված պահանջների գումարը գերազանցում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը, ապա Տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ապահովագրական գումարի սահմաններում:
- 4.5. Սույն Պայմաններով ապահովագրական պատահար են համարվում նաև ՃՏՊ-ի տեղի ունենալու հետևանքով պատճառված հետևյալ վնասները Պայմանագրում/Վկայագրում նշված ԱՄ-ի գծով՝**
- 4.5.1** գույքին պատճառված վնասներ, որոնք ներառում են տուժողի ԱՄ-ի վնասը, ոչնչացումը կամ կորուստը, տուժողին պատկանող այլ գույքի վնասը, ոչնչացումը կամ կորուստը,
- 4.5.2.** անձնական վնասներ, որոնք ներառում են տուժողի առողջությանը պատճառված վնասները և դրանց հետևանքով աշխատունակության ժամանակավոր կորուստը (եթե

Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում տվյալ իրադարձությունն ապահովագրելու վերաբերյալ) կամ մահը:

5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՆ ՈՒՂԵԼՈՐՆԵՐԻ ԴԺՔԱՆՑ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 5.1.** Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված ԱՄ-ի օգտագործման ընթացքում առաջացած ապահովագրական պատահարի արդյունքում վարորդի և/կամ ուղևորների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ:
- 5.2.** Ապահովագրական գումար է հանդիսանում այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վարորդին և/կամ ուղևորներին հատուցել կրած վնասները:
- 5.3.** Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել՝ «Նստատեղերի համակարգով» կամ «համամասնական համակարգով»:
- 5.3.1.** «Նստատեղերի համակարգով» Պայմանագրի/Վկայագրի կնքման դեպքում ապահովագրական գումարը ԱՄ-ի յուրաքանչյուր Նստատեղի համար, որտեղ կարող է գտնվել Ապահովագրված անձը (վարորդը, ուղևորը) սահմանվում է նույն չափով: Ընդ որում՝ ապահովագրված Նստատեղերի քանակը չի կարող գերազանցել տվյալ ԱՄ-ն արտադրող գործարանի կողմից սահմանված Նորմատիվների համաձայն Նստատեղերի առավելագույն քանակը:
- 5.3.2.** «Համամասնական համակարգով» Պայմանագրի/Վկայագրի կնքման դեպքում ապահովագրական գումարը սահմանվում է բոլոր Ապահովագրված անձանց համար: Ապահովագրված անձանց քանակը չի կարող գերազանցել տվյալ ԱՄ-ն արտադրող գործարանի կողմից սահմանված Նորմատիվների համաձայն Նստատեղերի առավելագույն քանակը: Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը սահմանվում է ընդհանուր ապահովագրական գումարից մասնաբաժնի տեսքով: Ընդ որում՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը սահմանվում է ապահովագրական պատահարից հետո և կազմում է՝
- ընդհանուր ապահովագրական գումարի 40% (քառասուն տոկոսը), եթե տուժել է մեկ Ապահովագրված անձ,
 - ընդհանուր ապահովագրական գումարի 35% (երեսունհինգ տոկոսը), եթե տուժել է 2 (երկու) Ապահովագրված անձ,
 - ընդհանուր ապահովագրական գումարի 30% (երեսուն տոկոսը), եթե տուժել է 3 (երեք) Ապահովագրված անձ,
 - ընդհանուր ապահովագրական գումարի մասնաբաժին, որը կազմում է ապահովագրական գումարի 100% (հարյուր տոկոսի) և տուժողների ընդհանուր քանակի հարաբերակցությունը, եթե տուժել է 4 (չորս) կամ ավելի Ապահովագրված անձ:

5.4. Սույն Պայմաններով ապահովագրական պատահար են համարվում Պայմանագրում/Վկայագրում նշված ԱՄ-ի օգտագործման ընթացքում սույն Պայմանների 3.1. կետում նշված պատահարների ի հայտ գալու արդյունքում վարորդի և/կամ ուղևորների՝

- 5.4.1.** մարմնական վնասվածքները, (փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում¹), քիմիական նյութերով և կենսաբանական ծագման թույլներով հանկարծակի սուր թունավորումը,
 - 5.4.2.** 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության ձեռք բերումը,
 - 5.4.3.** մահը,
 - 5.4.4.** ժամանակավոր աշխատունակությունը (եթե Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում տվյալ դիսկն ապահովագրելու վերաբերյալ):
- 5.5.** Սույն Պայմաններով ապահովագրական պատահար չի համարվում Ապահովադրի (Լիազորված վարորդի) դիտավորյալ գործողությունների արդյունքում սեփական անձին վնասվածքներ պատճառելը (ներառյալ ինքնասպանությունը կամ ինքնասպանության փորձը):

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1.** Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը պարտավոր է ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում՝
- 6.1.1.** ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց և նրան հայտնի դառնալու պահից հետո անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) հայտնել համապատասխան իրավասու մարմիններին, մասնավորապես, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ՀՀ-ում, ապա ստորև նշված մարմիններին, իսկ ՀՀ տարածքից դուրս տեղի ունեցած ապահովագրական պատահարների դեպքում՝ համապատասխան իրավասու մարմիններին, կառույցներին.
 - **ՃՏԴ-ի (վթարի)** դեպքում՝ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության կամ ՃՈ մարմիններին,
 - **Հրդեհի** դեպքում՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ)-ի փրկարար ծառայությանը,
 - **Տարերային աղետների** դեպքում՝ ՀՀ Ներքին գործերի նախարարությանը,

¹ *Առաջնային բժշկական ծախսեր*՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալուց հետո 48 (քառասունութ) ժամվա ընթացքում բժշկական հաստատություն դիմելու դեպքում տվյալ իրադարձության կապակցությամբ հետազոտվելու (լաբորատոր-գործիքային հետազոտություններ) և անհրաժեշտ առաջնային բժշկական օգնություն ստանալու (վիրահատական կամ ոչ վիրահատական բուժում, ֆիքսման միջոցների՝ մետաղական կոնստրուկցիաների, գիպսի, բանդաժի տեղադրում և հանում, այդ բուժման ընթացքում բժշկի կողմից նշանակված դեղորայքի տրամադրում) գծով փաստացի կատարված ծախսերը՝ բացառությամբ հետբուժական շրջանում կատարվող ծախսերի (բացառությամբ մետաղական կոնստրուկցիաների հեռացման գծով կատարվող ծախսերի), այդ թվում՝ հետբուժական շրջանում դիմամիկ հսկողության, պահպանողական և վերականգնողական բուժման գծով ծախսերի, ինչպես նաև փաստաթղթորեն հիմնավորված բուժօրանսպորտային ծախսերը, այդ թվում՝ մոտակա բժշկի մոտ կամ բժշկական հաստատություն շտապ օգնության մեքենայով փոխադրման ծախսերը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

- **Երրորդ անձանց հակաիրավական գործողությունների** դեպքում՝ ՀՀ ՆԳՆ Ոստիկանությանը,
- **Կորստի** դեպքում՝ ՀՀ ՆԳՆ Ոստիկանությանը,
- **Մարմնական վնասվածքի** դեպքում՝ ՀՀ-ում գործող և լիցենզավորված բժշկական հաստատությանը:

6.1.2. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո և նրան հայտնի դառնալու պահից անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) տեղի ունեցած պատահարի մասին հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին՝ Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարով,

6.1.3. տեղի ունեցած պատահարի մասին Ապահովագրողին հայտնել հնարավորինս ամբողջական տեղեկատվություն, որը հայտնի է իրեն ծանուցելու պահի դրությամբ (ամսաթիվը, ժամը և վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն),

6.1.4. Ապահովագրողին պատահարի մասին ծանուցելու ամսաթվից ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևի գրավոր հայտային դիմում՝ պատահար տեղի ունենալու փաստի մասին իրեն հայտնի բոլոր մանրամասների շարադրմամբ,

6.1.5. պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովագրողին/Լիազորված վարորդին/զանգողին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և կատարել նրա ցուցումները,

6.1.6. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման և/կամ հնարավորության դեպքում՝ նվազեցման ուղղությամբ, ինչպես նաև այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը, հետևել Ապահովագրողի ցուցումներին,

6.1.7. Ապահովագրողի կողմից նշված ժամկետներում Ապահովագրողին և/կամ անկախ փորձագետին տրամադրել ապահովագրված ԱՄ-ի գնումն իրականացնելու հնարավորություն՝ վնասի չափը որոշելու նպատակով,

6.1.8. չվերանորոգել վնասված ԱՄ-ն և պահպանել այն վիճակում, որում այն հայտնվել է պատահարից հետո՝ մինչև Ապահովագրողի և/կամ անկախ փորձագետի կողմից դրա գնումը: Չնկումը պետք է կատարվի Ապահովագրողին պատահարի մասին հեռախոսազանգի միջոցով կամ գրավոր ձևով տեղեկացնելուց և գնման հնարավորություն ընձեռելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Մինչև Ապահովագրողի և/կամ անկախ փորձագետի կողմից գնում կատարելը, ԱՄ-ին պատճառված վնասների ձևախախտումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դա կատարվել է մարդկանց անվտանգության նկատառումներից ելնելով, ինչի անհրաժեշտությունը պետք է արձանագրվի ՃՏՊ-ի հետ կապված իրավասու մարմինների կողմից տրամադրված համապատասխան փաստաթղթերով կամ համաձայնեցվի Ապահովագրողի հետ՝ վերոնշյալ միջոցներով (հեռախոսազանգի միջոցով և/կամ գրավոր):

6.1.9. Նշել պատահարում ներգրավված այլ ԱՄ-ի հաշվառման համարանիշը, պարզել պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթերի համարները (հնարավորության դեպքում),

6.1.10. Եթե Ապահովագրողն Ապահովադիրին/Լիազորված վարորդին/զանգողին չի տեղեկացրել, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր՝ չտեղաշարժել ԱՄ-ն կամ պատահարի հետ կապ ունեցող առարկաները, և/կամ չլքել պատահարի վայրը մինչև սույն Պայմանների 6.1.1. կետում նշված համապատասխան իրավասու մարմնի/մարմինների աշխատողների ժամանումը դեպքի վայր և վերոհիշյալ անձանց կողմից պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացումը,

6.1.11. պատահարի այլ մասնակիցներին, որոնք վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մտադրություն ունեն, հայտնել տեղեկություններ Պայմանագրի/Վկայագրի առկայության վերաբերյալ, ինչպես նաև Ապահովագրողի անվանումը, հասցեն և հեռախոսահամարը,

6.1.12. ներկայացնել սույն Պայմանների 7.1 և/կամ 7.2 և/կամ 7.6 և/կամ 7.7 և/կամ 7.8 կետերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը:

6.2. Եթե ԱՄ-ին պատճառվել է վնաս Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով (բացառությամբ այլ ԱՄ-ի կամ անձի կողմից պատճառված վնասների), և Ապահովադիրը պատահարի մասին սահմանված կարգով տեղեկացրել է Ապահովագրողին, հետևել է Ապահովագրողի ներկայացուցչի տված ցուցումներին (պատահարի վայրում տեղանքի և կրած վնասի առնվազն հինգ լուսանկար, որոնցում պետք է արտացոլված լինեն ԱՄ-ի պետհամարանիշը, նույնականացման համարը և այլն), սակայն այդ մասին չի հայտնել համապատասխան իրավասու մարմիններին, ապա Ապահովագրողի կողմից տրամադրվող հատուցման չափը չի կարող գերազանցել 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը: Չհատուցվող գումարը և այլ հնարավոր նվազեցումները կիրառվում են պայմանագրում սահմանված կարգով: Եթե տվյալ պատահարի շրջանակներում ի հայտ են գալիս նոր հանգամանքներ՝ Ապահովագրողը կարող է մերժել հատուցումը կամ կիրառել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր այլ իրավունքները: Սույն դրույթը կիրառելի է այն դեպքում, երբ Ապահովագրողի կողմից իրականացվել է նախաապահովագրական զննություն:

6.3. Հայտի կամ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության դեպքում Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը, որը մտադիր է հատուցման պահանջ ներկայացնել կամ արդեն իսկ հատուցման պահանջ է ներկայացրել, պարտավոր է հետևել Ապահովագրողի տված օրինական ցուցումներին և պահանջներին:

6.4. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ հայտնել Ապահովագրողին երրորդ անձանցից վնասների հատուցում ստանալու մասին, իսկ այն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին հայտնել այդ մասին նաև գրավոր: Սույն պայմանը խախտելու դեպքում և Ապահագրողին հայտնի դառնալուց հետո տվյալ հարցը կկարգավորվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Եթե Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդն ապահովագրական պատահարի արդյունքում ստացել են մարմնական վնասվածքներ կամ, ելնելով առողջական վիճակից, ի վիճակի չեն եղել 6.1.2. կետում նշված ժամանակահատվածում տեղյակ պահել Ապահովագրողին պատահարի մասին, ապա Ապահովադիրը և/կամ Լիազորված

վարորդը պարտավոր են Ապահովագրողին ներկայացնել տեղեկացնելու անհնարինության փաստը հավաստող համապատասխան գրավոր ապացույց:

6.6. 6.1. կետում նշված պարտականությունները (դրանց կատարման հնարավորության դեպքում) կրում է նաև Շահառուն, եթե տեղյակ է իր օգտին Պայմանագրի/Վկայագրի կնքված լինելու մասին և եթե մտադիր է օգտվել ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

7. ՎՆԱՍԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7.1. «Կորուստ» իրադարձության գծով պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձն Ապահովագրողին է ներկայացնում

7.1.1. Պայմանագրի/Վկայագրի պատճենը,

7.1.2. ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) պատճենները,

7.1.3. ապահովագրված ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները,

7.1.4. Ապահովագրողի պահանջի դեպքում վերոնշյալ փաստաթղթերի բնօրինակները,

7.1.5. բանալիների, ապահովագրված ԱՄ-ում տեղադրված հակաառևանգման բոլոր էլեկտրոնային և էլեկտրամեխանիկական համակարգերի ակտիվ և պասիվ ակտիվատորների (առկայության դեպքում) քարտերի, մեխանիկական հակաառևանգման սարքերի բոլոր բանալիների լրիվ կոմպլեկտները,

7.1.6. քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության պատճենը, ինչպես նաև Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով համապատասխան իրավասու մարմիններից ստացված տեղեկանք կամ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր՝ հանցանք կատարած անձի հայտնաբերման կամ չհայտնաբերման վերաբերյալ,

7.1.7. Եթե 7.1.2 և 7.1.5. կետերում նշված փաստաթղթերը և/կամ իրերը մնացել են գողացված ԱՄ-ում, Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ վերջիններիս պատշաճ լիազորված անձինք Ապահովագրողին են ներկայացնում ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հավաստող համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք,

7.1.8. Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.2. «Վնաս» իրադարձությունների խմբի գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ վերջիններիս պատշաճ լիազորված անձինք Ապահովագրողին են ներկայացնում

7.2.1. Պայմանագրի/Վկայագրի պատճենը,

7.2.2. ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին ԱՄ-ն վարող անձի վարորդական իրավունքի պատճենը,

- 7.2.3.** ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (ԱՄ-ի հաշվառման վկայագրի, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) պատճենները,
- 7.2.4.** ապահովագրված ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը արձանագրող փաստաթղթերի պատճենները,
- 7.2.5.** ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը արձանագրող փաստաթղթերը համապատասխան իրավասու մարմիններից (ՀՀ տարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների դեպքում՝ ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունից, ՀՀ ՆԳՆ ՃՈ մարմիններից, ՀՀ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ)-ի փրկարար ծառայությունից և այլն, իսկ ՀՀ տարածքից դուրս տեղի ունեցած ապահովագրական պատահարների դեպքում՝ համապատասխան իրավասու մարմիններից, կառույցներից),
- 7.2.6.** ԱՄ-ի Էվակուացիոն ծառայության դիմաց մասնագիտացված կազմակերպությունների կողմից ներկայացված հաշիվների պատճենները, եթե Էվակուացիան իրականացվել է Ապահովագրողի համաձայնությամբ,
- 7.2.7.** Ապահովագրողի պահանջի դեպքում վերոնշյալ փաստաթղթերի բնօրինակները,
- 7.2.8.** Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
- 7.3.** Ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված ԱՄ-ին պատճառված վնասի գնահատումը կարող է իրականացվել Ապահովագրողի կամ Ապահովագրողի կողմից մատնանշված անկախ փորձագետի կողմից, որի ծառայության վճարը վճարում է Ապահովագրողը:
- 7.4.** Ապահովագրողի կամ անկախ փորձագետի եզրակացության հետ չհամաձայնվելու դեպքում Ապահովագրողը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ վերջիններիս պատշաճ լիազորված անձինք իրավունք ունեն կազմակերպել կրկնակի փորձաքննության իրականացում, որի ծառայության դիմաց վճարը վճարում է տվյալ փորձաքննության իրականացման նախաձեռնողը: Կրկնակի փորձաքննության համար Ապահովագրողը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ վերջիններիս պատշաճ լիազորված անձինք կարող են դիմել հատուցման վճարման (մերժման) որոշման ծանուցումն ստանալուց ոչ ուշ քան 20 աշխատանքային օրվա ընթացքում:
- 7.5.** Ապահովագրողն իրավունք ունի չհամաձայնվել Ապահովագրողի (Շահառուի) կամ Լիազորված վարորդի կամ վերջիններիս պատշաճ լիազորված անձանց կողմից ներկայացված փորձաքննության եզրակացության հետ և կարող է իրականացնել երրորդ փորձաքննությունը, որի ծառայության վճարը վճարում է Ապահովագրողը:
- 7.6. ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով** պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը/Տուժողը/Տուժողի իրավահաջորդը կամ վերջիններիս պատշաճ լիազորված անձինք Ապահովագրողին ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը, ընդ որում եթե Ապահովագրողին ունի Ապահովագրողի հետ կնքած և գործող ԱՊՊԱ պայմանագիր և դրա շրջանակներում համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են՝ Ապահովագրողը կարող է չպահանջել փաստաթղթեր.
- 7.6.1.** համապատասխան իրավասու մարմիններից (ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունից, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ՃՈ մարմիններից, ՀՀ Ներքին գործերի նախարարության

(ՆԳՆ)-ի փրկարար ծառայությունից և այլն) ապահովագրական պատահարի փաստը հավաստող փաստաթղթեր,

7.6.2. Տուժողի ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (ԱՄ-ի, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) և ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին ԱՄ-ն վարող անձի վարորդական իրավունքի պատճենները,

7.6.3. Տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է Տուժողի իրավահաջորդը,

7.6.4. Ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող Նոտարական կարգով վավերացված (ֆիզիկական անձի դեպքում) կամ իրավաբանական անձի կողմից պատշաճ տրված լիազորագիր (իրավաբանական անձի դեպքում),

7.6.5. ԱՄ-ի, ինչպես նաև այլ գույքի վնասման և/կամ ոչնչացման դեպքում՝ վնասի վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում վնասված ԱՄ-ի կամ գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով,

7.6.6. ԱՄ-ի, ինչպես նաև այլ գույքի կորստի դեպքում՝ կորստի փաստը հավաստող փաստաթղթեր,

7.6.7. Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.7. Տուժողի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են՝

7.7.1. տուժողի կողմից ստացված վնասվածքների վերաբերյալ եզրահանգումը պարունակող դատաբժշկական (բժշկական) փորձաքննության (ներառյալ՝ քրեադատավարական գործընթացներից դուրս կազմված) ակտի (եզրակացության) բնօրինակը, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) և օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ամբողջությամբ պարունակում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) եզրահանգումները,

7.7.2. ամբուլատոր բժշկական օգնության դեպքում՝ ամբուլատոր քարտից քաղվածքի և (կամ) բժշկական տեղեկանքի և (կամ) կոնսուլտացիոն թերթիկի և (կամ) բժշկի եզրակացության բնօրինակը,

7.7.3. ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար քարտից քաղվածքի (Էպիկրիզի) բնօրինակը և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման ձևի (ձև 0001) բնօրինակները

7.7.4. միասնական էլեկտրոնային համակարգով պատշաճ կերպով դուրս գրված հաշիվ կամ բուժհաստատության ղեկավարի և (կամ) բժշկական սարքավորումներ կամ պարագաներ մատակարարող կազմակերպության և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) թղթային հաշիվ, որոնցում պետք է արտացոլված լինեն նաև բժշկական ծառայություն ստացած անձի անունը, ազգանունը և մատուցված բժշկական ծառայության տեսակը, իսկ առողջությանը պատճառված վնասների գծով տուժողի կամ երրորդ անձի կողմից արդեն իսկ վճարում կատարված լինելու դեպքերում՝

ա) վճարման հաշվի (հաշիվ-ապրանքագրի) բնօրինակը և հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի բնօրինակը՝ դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ բանկային փոխանցման անդորրագիր (անկանխիկ վճարման դեպքում) կամ վճարման փաստը հավաստող այլ փաստաթուղթ՝ ներառյալ ծառայությունը մատուցած կամ ապրանքը վաճառած հաստատության կողմից տրված համապատասխան տեղեկանք,

բ) կամ դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր կամ վճարահաշվարկային այլ փաստաթղթեր (կանխիկ վճարման դեպքում), որոնցում հստակ արտացոլված է մատուցված ծառայությունների կամ ձեռքբերված ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն:

7.7.5. Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.8. Վարորդին և ուղևորներին դժբախտ պատահարի հետևանքով պատճառված վնասների դեպքում Ապահովագրողին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

7.8.1. Մարմնական վնասվածքի, I, II, III խմբի հաշմանդամության կարգավիճակի ձեռք բերման դեպքում

7.8.1.1. Պայմանագրի/Վկայագրի պատճենը,

7.8.1.2. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

7.8.1.3. համապատասխան իրավասու մարմինների (Լիցենզավորված բժշկական հաստատության, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության և այլն, ՀՀ տարածքից դուրս տեղի ունեցած ապահովագրական պատահարների դեպքում՝ համապատասխան իրավասու մարմինների, կառույցների) կողմից տրված փաստաթղթերը, որոնք վկայում են պատահարի առաջացման, առաջացման հանգամանքների մասին և պարունակում են Ապահովագրված անձի ամբողջական ախտորոշումը, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին տեղեկություններ,

7.8.1.4. բժշկասոցիալական փորձաքննության մարմնի տեղեկանքը հաշմանդամության խումբը (կարգը) սահմանելու մասին,

7.8.1.5. Ապահովագրողի պահանջի դեպքում ներկայացված փաստաթղթերի բնօրինակները,

7.8.1.6. Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.8.2. Ապահովագրված անձի մահվան դեպքում

7.8.2.1. Պայմանագրի/Վկայագրի պատճենը,

7.8.2.2. մահվան վկայականի բնօրինակը կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված պատճենը,

7.8.2.3. բժշկական փաստաթուղթ (կամ դրա օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված պատճենը), որտեղ նշված է Ապահովագրված անձի մահվան պատճառը (մահվան վկայական, դատաբժշկական եզրակացություն և այլն),

7.8.2.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ժառանգության իրավունքի վկայականի պատճենը (ներկայացվում է միայն ժառանգի կամ ժառանգների կողմից),

7.8.2.5. Ապահովագրողի պահանջի դեպքում ներկայացված փաստաթղթերի բնօրինակները,

7.8.2.6. Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.8.3. Ապահովագրված անձի ժամանակավոր անաշխատունակության դեպքում

7.8.3.1. Պայմանագրի/Վկայագրի պատճենը,

7.8.3.2. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

7.8.3.3. անաշխատունակության թերթիկ բուժհաստատությունից, որտեղ անց է կացվել բուժումը և սահմանված ձևի տեղեկանք՝ ցուցաբերված ամբուլատոր կամ ստացիոնար բուժօգնության վերաբերյալ, որը պարունակում է Ապահովագրված անձի ամբողջական ախտորոշումը, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին տեղեկություններ,

7.8.3.4. Ապահովագրողի պահանջի դեպքում ներկայացված փաստաթղթերի բնօրինակները,

7.8.3.5. Ապահովագրողի պատշաճ ներկայացված պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.9. Եթե սույն Պայմանների 7.1., 7.2., 7.6., 7.7., 7.8. կետերում նշված փաստաթղթերից որևէ մեկը կցված է քրեական վարույթին, ապա հատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձը պարտավոր է ներկայացնել տվյալ հանգամանքը հավաստող փաստաթուղթ:

7.10. Հատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձը պարտավոր է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պատահար տեղի ունենալու պահից սկսած 2 (երկու) ամսվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

7.10.1. Եթե հատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձը փաստաթղթերի ներկայացմանը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ գրավոր միջնորդություն է ներկայացնում կամ գրավոր ձևով դիմում է այլ պատճառաբանությամբ փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետը երկարաձգելու համար, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել ևս 2 (երկու) ամսով:

7.10.2. Սահմանված երկամսյա ժամկետը երկարաձգելու մասին միջնորդություն չներկայացնելու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը՝ փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետը լրանալուց և այդ մասին Ապահովադրին ծանուցելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

7.10.3. Սույն Պայմաններով սահմանված ժամկետում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալու օրվանից հետո՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը կայացնում է ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու կամ նվազեցնելու մասին որոշում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ապահովադրին (Շահառուին, Ապահովագրված անձին, Տուժողին):

8. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 8.1.** Ապահովագրական հատուցման որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում, իսկ հատուցումը մերժելու կամ նվազեցնելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը պատվիրված նամակով 5 (հինգ) օրվա ընթացքում առաքում է Ապահովադրին (Շահառուին, Ապահովագրված անձին, Տուժողին)՝ նրա՝ Ապահովագրողին նրա մշտական բնակության վայրի կամ գտնվելու վայրի հասցեով:
- 8.2. «Կորուստ»** իրադարձության գծով ապահովագրական հատուցման չափը սահմանվում է՝ ելնելով ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ԱՄ-ի իրական (շուկայական) արժեքից՝ նվազեցնելով Պայմանագրում/Վկայագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը: Ոչ պայմանական չհատուցվող գումարը ԱՄ-ի «Կորուստ» իրադարձությունների խմբի դեպքում կազմում է յուրաքանչյուր ԱՄ-ի գծով սահմանված ապահովագրական գումարի 5%-ը (հինգ տոկոսը), եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.3.** ԱՄ-ի «Կորուստ» իրադարձության գծով ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն կնքելուց հետո, որտեղ նշվում է Ապահովադրի պարտավորությունն ԱՄ-ի հայտնաբերման դեպքում Ապահովագրողին անմիջապես տեղեկացնելու և 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ստացված ապահովագրական հատուցումը վերադարձնելու մասին: Այն դեպքում, երբ գողացված/ապօրինաբար օգտագործված/կողոպտված/ավազակության արդյունքում ձեռք բերված ԱՄ-ն հայտնաբերվել է մինչև «Կորուստ» իրադարձության գծով ապահովագրական հատուցման վճարումը, ինչպես նաև գողացված/ապօրինաբար օգտագործված/կողոպտված/ավազակության արդյունքում ձեռք բերված ԱՄ-ի հայտնաբերելուց հետո՝ ԱՄ-ին պատճառված վնասը դիտարկվում է որպես երրորդ անձանց հակաիրավական գործողություն:
- 8.4. «Վնաս»** իրադարձությունից ապահովագրված ԱՄ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցման չափը սահմանվում է՝ ելնելով ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ԱՄ-ի իրական (շուկայական) արժեքից՝ նվազեցնելով ստորև բերված տարրերը հետևյալ հերթականությամբ.
- 8.4.1.** պիտանի մնացորդների արժեքը լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,
- 8.4.2.** Պայմանագրում/Վկայագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը:
- Ընդ որում, եթե ԱՄ-ն ապահովագրված է ոչ լրիվ արժեքով՝ նախ կիրառվում է համամասնության պայմանը, որից հետո նվազեցվում է Պայմանագրում/Վկայագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը:
- 8.5.** Պիտանի մնացորդների արժեքը լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում հաշվարկվում է համաձայն գործող ԱՊՊԱ Կանոններում նշված մեթոդաբանության, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

8.6. ԱՄ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում Ապահովագրողի համաձայնությամբ հնարավոր է ապահովագրական հատուցման չափը չնվազեցնել ԱՄ-ի պիտանի մնացորդների արժեքի չափով՝ դրանք Ապահովագրողին փոխանցելու պայմանով: Այս դեպքում նախքան Ապահովագրողին ԱՄ-ի պիտանի մնացորդների փոխանցումը այն պետք է Ապահովադրի կողմից հանվի հաշվառումից ճՈ մարմիններում կամ իրականացվեն պատշաճ մաքսային ձևակերպումներ, որոնց գծով ծախսերը կրում է Ապահովադիրը (Շահառուն):

8.7. «Վնաս» իրադարձությունից ապահովագրված ԱՄ-ի վնասման դեպքում հատուցման ենթակա են հետևյալ ծախսերը՝

8.7.1. վերանորոգման ծախսերը, որոնք ներառում են վերանորոգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի արժեքը, վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերի արժեքը, վերանորոգման աշխատանքների արժեքը:

Ընդ որում՝ վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերի արժեքը որոշելիս՝

- դրանք նախկինում օգտագործված պահեստամասերով փոխարինելու դեպքում ապահովագրված ԱՄ-ի մաշվածությունը շահագործման տարիների ընթացքում հաշվի չի առնվում և հատուցման ենթակա գումարից չի նվազեցվում,
- դրանք գործարանային կամ ոչ գործարանային արտադրության նոր պահեստամասերով փոխարինելու դեպքում հատուցման ենթակա գումարից նվազեցվում է ապահովագրված ԱՄ-ի պահեստամասերի մաշվածությունը շահագործման տարիների ընթացքում համաձայն ստորև բերված աղյուսակների՝

Աղյուսակ 1

Նախկին Խորհրդային Միության երկրներում արտադրված
ավտոտրանսպորտային միջոցների վնասված բաղադրիչների արժեքի
հաշվարկման համար կիրառվող մաշվածության տոկոսները

Վազքը (Հազ.կմ)	ԱՄ տարիք				
	0-ից 2	3-ից 10	11-ից 15	16-ից 20	21 և ավելի
0-40	Չի կիրառվում	6	11	13	16
41-100	5	8	12	14	20
101-150	6	9	13	15	23
151-200	9	11	13	16	25
201-300	10	12	14	17	27
300-ից ավելի	12	13	15	18	30

Աղյուսակ 2

Նախկին Խորհրդային Միության երկրներից բացի այլ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների վնասված բաղադրիչների արժեքի հաշվարկման համար կիրառվող մաշվածության տոկոսները

Վազքը (Հազ.կմ)	ԱՄ տարիք					
	0-ից 2	3-ից 4	5	6-ից 8	9-ից 10	11 և ավելի
0-40	Չի կիրառվում			17	21	24
41-80				20	23	27
81-100				24	28	30
101-140	18	22	24	27	29	31
141-160	20	23	26	28	29	32
161-180	22	26	27	30	31	33
181-200	24	27	29	31	32	33
201-250	25	28	30	32	33	35
251-350	32	33	36	38	38	40
0-ից ավելի	40	42	44	46	46	47

Վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերը ոչ գործարանային արտադրության նոր պահեստամասերով Ապահովագրողի համաձայնությամբ փոխարինելու դեպքում հատուցման ենթակա գումարից կարող է չնվազեցվել ապահովագրված ԱՄ-ի պահեստամասերի մաշվածությունը շահագործման տարիների ընթացքում:

8.7.2. ապահովագրված ԱՄ-ի՝ վթարի (ներառյալ՝ ճՏՊ-ի) վայրից մինչև ավտոտեխսպասարկման կետը տեղափոխման (Էվակուացիոն) ծախսերը, եթե ԱՄ-ն ինքնուրույն չի տեղաշարժվում:

8.8. «Վնաս» իրադարձության գծով վնասի չափը սահմանվում է՝

8.8.1. Ապահովագրողի կամ համապատասխան իրավասու մարմնի կողմից կազմված վերանորոգման, վերականգնման արժեքի հաշվարկների հիման վրա,

8.8.2. ապահովագրված ԱՄ-ի փաստացի կատարված վերանորոգման դիմաց վերանորոգող կազմակերպության, ավտոտեխսպասարկման կետի հաշիվների հիման վրա, որտեղ Ապահովագրին (Շահառուին) ուղղորդել է Ապահովագրողը: Վերանորոգման ծախսերը հատուցվում են վերանորոգման և դրա համար կատարված վճարման փաստը հավաստող փաստաթղթերի պատճենների ներկայացման դեպքում (Ապահովագրողի պահանջի դեպքում նաև փաստաթղթերի բնօրինակները):

Վնասի չափը կարող է սահմանվել նաև Ապահովագրողի կողմից կազմված վերականգնման, վերանորոգման արժեքն արտացոլող փաստաթղթի (ակտի) հիման վրա:

8.9. Վերականգնման, վերանորոգման արժեքի հաշվարկը սահմանվում է՝ ելնելով ՀՀ-ում վերանորոգման աշխատանքների շուկայական գներից, որոնք պետք է համապատասխանեն տվյալ շուկայում ձևավորված նմանատիպ վերանորոգման

աշխատանքների պատշաճ որակով իրականացման համար սովորաբար գանձվող գներին:

8.10. Եթե վնասված ԱՄ-ի վերանորոգման ընթացքում հայտնաբերվել են այնպիսի վնասվածքներ, որոնք գնելու ժամանակ չէին հայտնաբերվել (թաքնված վնասներ/ չհայտնաբերված թերություններ), Ապահովագրողը պարտավոր է մինչև դրանց վերականգնման պահը կասեցնել վերանորոգման աշխատանքները, անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Ապահովագրողին թաքնված վնասների/թերությունների հայտնաբերման մասին՝ Ապահովագրողի կողմից համապատասխան փաստաթղթում փոփոխություն իրականացնելու համար: Նշվածի հետևանքով իրականացված ԱՄ-ի գնման արդյունքներն ամփոփող փաստաթղթի մեջ սահմանվում են թաքնված վնասների/ չհայտնաբերված թերությունների առաջացման պատճառները և դրանց կապն ապահովագրական պատահարի հետ: Եթե հաստատվում է, որ հայտնաբերված թաքնված վնասներն առաջացել են ապահովագրական պատահարի արդյունքում, Ապահովագրողը հատուցում է նաև դրանց վերացման գծով իրականացված ծախսերը:

8.11. Ապահովագրողի կողմից 8.10 կետում շարադրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը թաքնված վնասների/չհայտնաբերված թերությունների մասով:

8.12. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ կապված վնասների նվազեցմանն ու կանխմանն ուղղված փաստաթղթորեն հաստատված ծախսերն Ապահովագրողին (Շահառուին) հատուցվում են, եթե դրանք ճանաչվել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումով:

8.13. Ապահովագրական հատուցման չափը սահմանելիս հաշվի չեն առնվում ԱՄ-ի բացակայող կամ վնասված այն մասերի, ագրեգատների, հանգույցների, ինչպես նաև դրանց տեղադրման արժեքները՝

8.13.1. որոնց բացակայությունը կամ վնասումը չի գտնվում տվյալ ապահովագրական պատահարի հետ պատճառահետևանքային կապի մեջ,

8.13.2. որոնք ֆիքսվել են Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ԱՄ-ի գնման ժամանակ, մինչև Ապահովագրողի կողմից կոմպլեկտավորված կամ վերանորոգված ԱՄ-ն կրկնակի գնման համար Ապահովագրողին ներկայացնելը:

8.14. Վնասի չափի մեջ չեն ներառվում՝

8.14.1. ԱՄ-ի տեխնիկական սպասարկման և երաշխիքային նորոգման արժեքը,

8.14.2. ԱՄ-ի արդիականացման կամ վերասարքավորման հետ կապված աշխատանքների արժեքը,

8.14.3. հանգույցների և ագրեգատների, նորոգման կազմակերպություններում դրանց վերականգնման համար պահեստամասերի կամ մասերի բացակայության պատճառով նորոգման փոխարեն դրանց ամբողջական փոխարինման արժեքը,

8.14.4. Պատահարի հետ առնչություն չունեցող կամ մաշվածության արդյունքում անհրաժեշտ նորոգման և/կամ դրա առանձին մասերի և դետալների, դրանց փոխարինման հետ կապված ծախսերը:

8.15. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է Պայմանագրում/Վկայագրում նշված տարածքի սահմաններում Տուժողի (եթե տվյալ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է ԱՄ-ի օգտագործումից բխող

պատասխանատվության ապահովագրություն) և Ապահովադրի՝ պատահարի արդյունքում ԱՄ-ի վնասման կամ ոչնչացման դեպքում տեղափոխումը (Էվակուացիան) պատահարի վայրից մինչև մոտակա ավտոտեխսպասարկման կետը Ապահովադրի, Տուժողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ: Ընդ որում՝ Ապահովագրողի կողմից վճարվող տեղափոխման ծախսերը չեն կարող գերազանցել 25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամը:

8.16. ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վնասի չափը սահմանելու համար՝

8.16.1. Տուժողի ԱՄ-ի վնասման դեպքում Ապահովագրողը, հիմք ընդունելով Ապահովադրից (Տուժողից) ստացված փաստաթղթերը՝ համաձայն 7.6 կետի, նշանակում է փորձաքննություն՝ իր վրա վերցնելով դրա հետ կապված ծախսերը,

8.16.2. կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում հատուցումը կատարվում է Տուժողի կողմից սույն Պայմանների 7.6.3. կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում: Տուժողի առողջությանը պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը՝ բացառությամբ հետևյալ ծախսերի գծով հատուցումների դեպքերի.

8.16.2.1. բժշկի ցուցումով բուժման շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումների, դեղեր ձեռք բերելու, պրոթեզավորման, անվասայլակի, տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման հետ կապված ծախսերը,

8.16.2.2. Տուժողի առողջության վերականգնման համար Տուժողի կամ այլ անձի կողմից արդեն իսկ կատարված ծախսերը, եթե Տուժողը կամ վճարումն իրականացնող անձը հիմնավորում են իրենց կողմից վճարման իրականացման անհրաժեշտությունը:

Եթե Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարի արդյունքում հատուցել են Տուժողի վնասները, ապա Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում կատարելու պարտականությունից:

8.17. ԱՄ-ի վերականգնումից (վերանորոգումից) հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադիրը (Տուժողը) պարտավոր է ԱՄ-ն ներկայացնել Ապահովագրողի գնմանը: Սույն պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, հետագայում տեղի ունեցած պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցման չափը սահմանելիս, հաշվի չեն առնվի ԱՄ-ի բացակայող կամ վնասված այն մասերի, դետալների, ագրեգատների, հագույցների ինչպես նաև դրանց վերանորոգման, փոխարինման, տեղադրման աշխատանքների արժեքները, որոնք արձանագրվել են նախկինում ներկայացված հայտով գնման ընթացքում:

8.18. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի գումարը:

8.19. Առանց իրավասու մարմիններից փաստաթղթերի ներկայացման վնասի հատուցման դեպքում չեն հատուցվում նորոգման ընթացքում հայտնաբերված թերությունները և վնասվածքները:

8.20. Դժբախտ պատահարի հետևանքով ԱՄ-ի վարորդին և/կամ ուղևորներին պատճառված վնասի չափը սահմանվում է՝

8.20.1. Ապահովագրված անձի հաշմանդամության խումբը (կարգը) հաստատելու կամ մահվան դեպքում ապահովագրական գումարի՝

- 100%-ի (հարյուր տոկոսի) չափով՝ հաշմանդամության I խումբ, սահմանելու դեպքում,
- 70%-ի (յոթանասուն տոկոսի) չափով՝ հաշմանդամության II խումբ սահմանելու դեպքում,
- 40%-ի (քառասուն տոկոսի) չափով՝ հաշմանդամության III խումբ սահմանելու դեպքում,
- 100%-ի (հարյուր տոկոսի) չափով՝ մահվան դեպքում:

8.20.2. Ժամանակավոր անաշխատունակության դեպքում վնասի չափը սահմանվում է բժշկական հաստատությունից ներկայացված փաստաթղթի հիման վրա, որում նշված են ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքի բնույթը, հետազոտության արդյունքները և կատարված բժշկական ծախսերի չափը: Ժամանակավոր անաշխատունակության դեպքում ապահովագրական հատուցման առավելագույն չափը սահմանվում է ապահովագրական գումարի 0.4 %-ի (չորս տասնորդական տոկոսի) չափով՝ բուժման յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելի քան 90 (իննսուն) օր:

8.21. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը կատարում է անկանխիկ եղանակով՝ Ապահովադրի (Շահառուի) հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

8.22. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում հատուցման վճարման հետ կապված հաշվարկների համար հիմք է սահմանվում Ապահովագրողի կողմից հատուցման որոշման ընդունման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի հրապարկած համապատասխան արժույթի փոխարժեքը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

8.23. Եթե ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասը ենթակա է հատուցման նաև ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի ներքո, ապա ապահովագրական հատուցումն առաջին հերթին իրականացվում է ԱՊՊԱ պայմանագրի հիման վրա՝ համապատասխան ապահովագրական ընկերության կամ «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո» ՀԿ-ի (այսուհետ՝ Բյուրո) կողմից՝ համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, իսկ Ապահովադրի, Ապահովագրված անձի և/կամ Տուժողի փաստացի կրած վնասները համապատասխան ապահովագրական ընկերությունների կամ Բյուրոյի կողմից հատուցման ենթակա գումարները գերազանցելու դեպքում տարբերությունը հատուցում է Ապահովագրողը Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում:

8.24. Պայմանագրի/Վկայագրի գծով բոլոր ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը:

8.25. Ապահովագրական գումարն ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է հատուցման գումարի չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ Ապահովադրին ապահովագրական հատուցում ստանալուց հետո չի վերականգնել այն:

8.26. Եթե ԱՄ-ին և/կամ ԱՄ-ի օգտագործման ընթացքում վարորդին և/կամ ուղևորներին և/կամ Ապահովադրի և/կամ Լիազորված վարորդի կողմից վթարի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասն առաջացել է հաջորդական դեպքերի արդյունքում, և դրա սկզբնական և գլխավոր պատճառ հանդիսացող դեպքն ապահովագրված է եղել Պայմանագրով/Վկայագրով սույն Պայմանների 3.1. կետում նշված իրադարձություններից, ապա այն ենթակա է հատուցման՝ անկախ մնացած դեպքերի ապահովագրված լինելու հանգամանքից:

8.27. Եթե Ապահովադիրը (Շահառուն) ստացել է վնասների հատուցում երրորդ անձանցից (վնաս պատճառողից), ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու իր պարտականությունից և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9.1. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

9.1.1. Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարը վրա հասնելուց և վերջիններիս հայտնի դառնալուց հետո անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) այդ մասին չի տեղեկացրել համապատասխան իրավասու մարմիններին (բացառությամբ Պայմաններով նախատեսված 6.2. կետի), եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

9.1.2. Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարը վրա հասնելուց և վերջիններիս հայտնի դառնալուց հետո անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) տեղի ունեցած պատահարի մասին չի տեղեկացրել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին,

9.1.3. ապահովագրված ԱՄ-ի վարորդը դիմել է փախուստի կամ ինքնակամ հեռացել է պատահարի վայրից և/կամ ԱՄ-ն պատահարի վայրից ինքնակամ տեղաշարժել է՝ առանց դրա անհրաժեշտության,

9.1.4. պատահարն առաջացել է Ապահովադրի (Շահառուի) կամ Լիազորված վարորդի, ապահովագրված ԱՄ-ի ուղևորների դիտավորյալ գործողությունների արդյունքում, ինչպես նաև վերոհիշյալ անձանց կողմից հանցագործություն, հանցագործության փորձ կամ հանցագործության նախապատրաստություն իրականացնելու արդյունքում,

9.1.5. Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը և/կամ Շահառուն և/կամ Ապահովադրի/Շահառուի կողմից լիազորված անձը սահմանված ժամկետում ԱՄ-ն չի ներկայացրել փորձաքննության և/կամ հնարավորություն չի ընձեռել Ապահովագրողին անցկացնելու փորձաքննություն և/կամ վնասված ԱՄ-ի վրա կատարել է կառուցվածքային փոփոխություններ (փոխել, վերանորոգել է վնասված հանգույցները և դետալները առանց Ապահովագրողի հետ գրավոր համաձայնեցնելու և այլն),

9.1.6. Ապահովադիրը (Շահառու) կամ Լիազորված վարորդը կամ վերջիններիս կողմից պատշաճ լիազորված անձինք Ապահովագրողին պատահարի վերաբերյալ հայտնել է և/կամ ներկայացրել է թերի և/կամ անարժանահավատ և/կամ կեղծ տեղեկություններ և/կամ փաստաթղթեր և/կամ դիմել է այլ անօրինական/հակաօրինական քայլերի՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,

9.1.7. Ապահովադիրը (Շահառու) կամ Լիազորված վարորդը չի կատարել սույն Պայմանագրով նախատեսված և/կամ Պայմանագրում/Վկայագրում նշված իր պարտականությունները/պարտավորությունները,

9.1.8. սույն Պայմանների 7.1.2 և 7.1.5. կետերում նշված փաստաթղթերը և/կամ իրերը մնացել են գողացված ԱՄ-ում և Ապահովադիրը (Շահառու) կամ Լիազորված վարորդը կամ վերջիններիս կողմից պատշաճ լիազորված անձն Ապահովագրողին չի ներկայացնում ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հավաստող իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք,

9.1.9. տվյալ դեպքի/իրադարձության տեղի ունենալու փաստը չի հաստատվել համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթերով,

9.1.10. Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը ապահովագրված ԱՄ-ի գողությունից, կողոպուտից, ավազակությունից կամ ապօրինաբար օգտագործումից հետո, Ապահովագրողին չի տրամադրել ապահովագրված ԱՄ-ի բանալիների օրիգինալ կոմպլեկտը և գրանցման փաստաթղթերը՝ ԱՄ-ի հաշվառման վկայագիրը, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (կամ դրանց փոխարինող փաստաթղթերը), բացառությամբ այն դեպքերի, երբ.

- Ապահովադիրը նախօրոք՝ մինչև ապահովագրական պատահարի ի հայտ գալը, գրավոր տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրված ԱՄ բանալիների, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի (կամ դրանց փոխարինող փաստաթղթերի) կորստի մասին,
- ապահովագրված ԱՄ-ի բանալիները, ԱՄ-ի հաշվառման վկայագիրը, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (կամ դրանց փոխարինող փաստաթղթերը), հափշտակվել են ավազակության կամ կողոպուտի արդյունքում,

9.1.11. տվյալ իրադարձությունը/իրադարձությունները, դեպքը/դեպքերը ՀՀ օրենսդրությամբ, սույն Պայմանագրով կամ Պայմանագրով/Վկայագրով չեն հանդիսանում պատահար/ապահովագրական պատահար և հատուցման ենթակա չեն,

9.1.12. ՀՀ օրենսդրությամբ, սույն Պայմանագրով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված այն դեպքերում, երբ Ապահովագրողը ազատվում է հատուցում տրամադրելու/վճարելու պարտականությունից,

9.1.13. ՀՀ օրենսդրության և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական հատուցման այլ մերժման հիմքերով:

9.2. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե՝

9.2.1. ապահովագրական պատահարն առաջացել է որպես հետևանք՝

ա) միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության

բ) ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, դիվերսիայի

գ) քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների, գործադուլների, ահաբեկչական գործողությունների

դ) օրենքով սահմանված այլ դեպքերի:

9.2.2. ապահովագրության պայմանագիր/վկայագիր կնքելիս Ապահովադիրն ապահովագրական օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է ապահովագրական ռիսկը գնահատելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ,

9.2.3. եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում,

9.2.4. եթե ապահովագրական պատահարը վրա է հասել Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ Շահառուի դիտավորության հետևանքով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

9.2.5. եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) մեղքով: Ընդ որում, Ապահովագրողը այս դեպքում իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

9.2.6. պատահարը տեղի է ունեցել պետական մարմինների կարգադրությամբ ապահովագրված ԱՄ-ի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու, ոչնչացման հետևանքով,

9.2.7. Ապահովադիրը (Շահառուն) վնասի պատճառման համար մեղավոր անձից կամ ապահովագրական ընկերության կողմից, որտեղ ապահովագրված է մեղավորի քաղաքացիական պատասխանատվությունը, հատուցում է ստացել:

9.3. Բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իմպերատիվ նորմերով սահմանված դեպքերից, սույն Պայմանագրում նշված հատուցման մեթոման, հատուցումից ազատման և հատուցման ոչ ենթակա հիմքերը կարող են չկիրառվել, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան է նախատեսված:

10. ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ/ՎԿԱՅԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

- 10.1.** Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովագրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա.
- 10.2.** Պայմանագիր/Վկայագիր կնքելու համար Ապահովագիրն Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
- 10.2.1.** Անձը հաստատող փաստաթուղթ (եթե Ապահովագիրը հանդիսանում է ֆիզիկական անձ) կամ պետական գրանցման վկայական (եթե Ապահովագիրը հանդիսանում է իրավաբանական անձ),
- 10.2.2.** ԱՄ-ի հաշվառման վկայագիր և ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հավաստող այլ փաստաթղթեր (ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, նոտարական վավերացումով լիազորագիր, վարձակալության պայմանագիր և այլն),
- 10.2.3.** առկայության դեպքում՝ անկախ փորձագետի կողմից տրամադրված ԱՄ-ի արժեքի գնահատման եզրակացություն,
- 10.2.4.** Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր և տեղեկություններ:
- 10.3.** Ապահովագիրը պատասխանատու է Ապահովագրողին տրամադրված տվյալների արժանահավատության համար:
- 10.4.** Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագիրը/Վկայագիրը գործում է մինչև Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված ամսաթվի ժամը 23:59-ը, եթե Պայմանագրով/Վկայագրով կամ այլ հանգամանքներով, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի/Վկայագրի դադարեցում, այլ բան նախատեսված չէ:
- 10.5.** Պայմանագիր/Վկայագիր կնքելիս՝ Ապահովագիրն, Ապահովագրողի պահանջով, պարտավոր է տրամադրել ԱՄ-ն՝ զննման:
- 10.6.** Պայմանագրի/Վկայագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում.
- 10.6.1.** եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
- 10.6.2.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում
- 10.6.3.** Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում
- 10.6.4.** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, այդ թվում՝ դատարանի որոշմամբ:
- 10.7.** Պայմանագիրը/Վկայագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.
- 10.7.1.** կողմերի համաձայնությամբ
- 10.7.2.** Ապահովագրի պահանջով
- 10.7.3.** Պայմանագրի/վկայագրի կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս

կողմը թույլ է տվել ապահովագրության պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում

10.7.4. Եթե ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովագրողը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը, եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

10.7.5. Պայմանագրով/Վկայագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10.8. Ապահովագրի նախաձեռնությամբ Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մտադրության մասին Ապահովագրողը պարտավոր է ծանուցել ոչ պակաս, քան Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը կարող է լուծվել կողմերի միջև կնքված համաձայնագրում նշված օրը՝ ոչ շուտ քան համաձայնագրի կնքման օրը:

10.9. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները կարող են փոփոխվել և/կամ լրացվել կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պայմանագրի/Վկայագրի ցանկացած փոփոխություն և/կամ լրացում համարվում է պատշաճ կատարված, եթե դրանք ձևակերպված են գրավոր՝ լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով և ստորագրված/հատատված են կողմերի կողմից:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԵՆ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ԱՄ-ի իրական կամ շուկայական արժեքը (ապահովագրական արժեքը) Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ:

11.2. ԱՄ-ի ապահովագրական արժեքը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ հաշվի առնելով ստորև թվարկվածները՝

11.2.1. կամ նոր ԱՄ-ի գինը՝ սահմանված պաշտոնական դիլերների կողմից՝ Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ

11.2.2. կամ առևտրային կազմակերպության կողմից տրված հաշիվ-ապրանքագիրը կամ ԱՄ-ի առք ու վաճառքի պայմանագիրը (ԱՄ-ի սկզբնական գնման դեպքում), ԱՄ-ի մաքսային փաստաթղթերը

11.2.3. կամ Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ԱՄ-ի շուկայական արժեքը: ԱՄ-ի շուկայական արժեքի սահմանման համար կարող են հիմք ընդունվել ԱՄ-ների գնանշման աղբյուրները, Ապահովագրի՝ շուկայական արժեքի վերաբերյալ կատարած հայտարարությունը և այլն

11.2.4. կամ իրավասու կազմակերպության կողմից գնահատված շուկայական արժեքը:

11.4. Պայմանագրում/Վկայագրում ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ ՀՀ օրենսդրության սահմանված դեպքերում, Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով:

11.5. Ապահովադիրն իրավունք ունի վերականգնելու յուրաքանչյուր ապահովագրական հատուցումից հետո նվազած ապահովագրական գումարը՝ սույն Պայմանների համաձայն Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտին մնացած ժամկետի համար՝ կնքելով լրացուցիչ համաձայնագիր և վճարելով համապատասխան ժամանակահատվածի համար հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճար:

11.6. ԱՄ-ի ոչ լրիվ արժեքով ապահովագրություն

Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել ապահովագրական գումար, որի մեծությունը պակաս է ապահովագրական արժեքից (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն): Այս դեպքում «Կորուստ» կամ «Վնաս» իրադարձությունների գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությանը համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

11.7. Եթե ԱՄ-ն ապահովագրվել է ոչ լրիվ արժեքով, Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի իրականացնելու լրացուցիչ ապահովագրություն մեկ այլ ապահովագրական ընկերության մոտ, սակայն բոլոր ապահովագրության պայմանագրերով ապահովագրական գումարները չպետք է գերազանցեն տվյալ ԱՄ-ի ապահովագրական արժեքը:

11.8. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի դրությամբ Պայմանագրով/վկայագրով ապահովագրված ԱՄ-ի գծով գործել են մի քանի Պայմանագրեր/Վկայագրեր, որոնք ծածկում են միևնույն ռիսկերը, ապա ապահովագրական հատուցման գումարի հաշվարկն իրականացվում է Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի և Ապահովադրի կողմից կնքված բոլոր պայմանագրերի գծով ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերակցությանը համամասնորեն:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողն ապահովագրության ամբողջ ժամկետի համար՝ ելնելով Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական գումարից և ապահովագրական սակագնի չափից:

12.2. Ապահովադիրը կարող է ապահովագրավճարը վճարել կանխիկ դրամով՝ Ապահովագրողի կամ Ապահովագրողի ապահովագրական գործակալի կողմից դրամարկղ մուտքագրելու կամ անկանխիկ՝ Ապահովագրողի Պայմանագրում/Վկայագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով: Ապահովագրավճարը վճարված է համարվում Ապահովագրողի դրամարկղում կամ հաշվարկային հաշվին դրամական միջոցները մուտք գործելու օրը:

12.3. Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ, եթե Պայմանագրով/Վկայագրով վճարման այլ կարգ նախատեսված չէ:

12.4. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիրը/Վկայագիրը

կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

12.5. Եթե Ապահովադիրն ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար սահմանում է լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում ծանուցելով Ապահովադիրին, եթե Պայմանագրով/վկայագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները: Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագրը՝ առանց Ապահովադիրին այդ մասին ծանուցելու: Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ազատվում է հատուցում կատարելու պարտականությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում:

12.6. Եթե ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարել է պայմանագիրը վաղաժամկետ լուծելու կամ այլ հիմքով, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճար պահանջելու միայն մինչև պայմանագրի գործողության դադարումն ընկած ժամանակահատվածի համար:

12.7. Սույն պայմանների 10.7. կետի 10.7.1. և 10.7.2. ենթակետով սահմանված պայմաններով կարգով Պայմանագիրը/վկայագիրը տվյալ ԱՄ-ի գծով լուծելու դեպքում վերադարձման ենթակա ապահովագրավճարից նվազեցվում են ԱՄ-ի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը Պայմանագրով/վկայագրով նախատեսված ընդամենը ապահովագրավճարի 20%-ի (քսան տոկոսի) չափով՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Պայմանագրով/վկայագրով այլ բան նախատեսված չէ.

$$ՎԱ = \text{ԸԱ} * \text{ԶԺ} / \text{ԳԺ} - \text{ԸԱ} * 0.2$$

ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,

ԸԱ՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Պայմանագրի/վկայագրի,

ԶԺ՝ Պայմանագրի/վկայագրի գործողության չլրացած ժամկետ,

ԳԺ՝ Պայմանագրի/վկայագրի գործողության ժամկետ:

12.8. Ապահովադրի կողմից Պայմանագրի/վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագիրը/վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/վկայագրով այլ բան նախատեսված չէ:

12.9. Ապահովագրողի կողմից Պայմանագրի/վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը/վկայագիրը լուծելու դեպքում ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20%-ի (քսան տոկոսի) չափով վերադարձման ենթակա ապահովագրավճարից չեն նվազեցվում, եթե Պայմանագրով/վկայագրով այլ բան

Նախատեսված չէ:

- 12.10. Այն դեպքում, երբ Ապահովադիրն վերադարձման ենթակա գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է բացասական թվային գումար, ապա վերադարձման ենթակա գումարը սահմանվում է զրո (ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում):
- 12.11. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով կնքված Պայմանագիրը/Վկայագիրը Ապահովադիրի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու և սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում Ապահովադիրն ապահովագրավճարը վերադարձվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Հաշվարկի համար հիմք է սահմանվում Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի դադարեցման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի հրապարկած համապատասխան արժույթի փոխարժեքը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

- 13.1.1. Պայմանագրով/Վկայագրով և սույն Պայմաններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,
- 13.1.2. Ներկայացնել դիմում ապահովագրության պայմանների փոփոխման, լրացուցիչ ապահովագրության և/կամ ապահովագրական գումարի մեծացման վերաբերյալ,
- 13.1.3. Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում այն կորցնելու դեպքում գրավոր դիմում ներկայացնելուց հետո Ապահովագրողից ստանալ դրա կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորցրած Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժը կորցրած,
- 13.1.4. վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը/Վկայագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 13.1.5. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին փոխարինել մեկ այլ անձով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Շահառուին փոխարինելու մասին Ապահովադիրը պարտավոր է գրավոր ծանուցել Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի/Վկայագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը կամ Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար,

13.2. Ապահովադիրը (Ապահովադիրի կողմից սույն Պայմանների համապատասխան դրույթներին տեղեկացված լինելու դեպքում՝ նաև Լիազորված Վարորդը/Շահառուն) պարտավոր է՝

- 13.2.1. Ապահովագրողի պատշաճ ներկայացրած պահանջով ԱՄ-ն տրամադրել Ապահովագրողին՝ զննման նպատակով՝ սույն Պայմաններով նախատեսված բոլոր դեպքերում,
- 13.2.2. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովադիրն Ապահովագրողի գրավոր պահանջով պարտավոր է նրան գրավոր տեղեկություններ հայտնել

ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար Էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին

13.2.3. վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը)՝

Պայմանագրում/Վկայագրում սահմանված չափով, կարգով և ժամկետներում,

13.2.4. Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ, սակայն ոչ ուշ քան Ապահովադրին (Շահառուին) և/կամ Լիազորված վարորդին այդ մասին հայտնի դառնալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագիր/Վկայագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա,

13.2.5. Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան Ապահովադրին (Շահառուին) և/կամ Լիազորված վարորդին այդ մասին հայտնի դառնալու պահից 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել ապահովագրված ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (ԱՄ-ի հաշվառման վկայագրի, ԱՄ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի), ԱՄ-ի բանալիների, գրանցման համարանիշերի կորստի, փոփոխման, ԱՄ-ն հաշվառումից հանելու կամ ՀՀ ՃՈ մարմիններում վերագրանցելու, Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ նշված նույնականացման տվյալներ պարունակող ԱՄ-ի ագրեգատների փոփոխման, ինչպես նաև ԱՄ-ի օգտագործման, տիրապետման, տնօրինման իրավունքի դադարեցման մասին,

13.2.6. եթե գողացված ապահովագրված ԱՄ-ն հայտնաբերվել կամ վերադարձվել են Ապահովադրին կամ հայտնի է դարձել նախկինում որպես գողացված հայտարարված ապահովագրված ԱՄ-ի գտնվելու վայրը, անմիջապես տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին, իսկ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումը: Ընդ որում, Ապահովագրողը իրավունք ունի երկարաձգել 30 օրյա (երեսնօրյա) ժամկետը: Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուին) հրաժարվում է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը, ապա պարտավոր է Ապահովագրողին փոխանցել հայտնաբերված կամ վերադարձված կամ նախկինում որպես գողացված հայտարարված ԱՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը,

13.2.7. եթե պատճառված վնասն ամբողջությամբ կամ մասամբ հատուցվել է մեղավոր անձի կողմից, 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել այդ մասին Ապահովագրողին,

13.2.8. հետևել Ապահովագրողի ցուցումներին՝ ապահովագրական պատահարի գծով վնասների կարգավորման կապակցությամբ ձեռնարկվող գործողություններն իրականացնելիս,

13.2.9. կատարել ապահովագրված ԱՄ-ի շահագործման և սպասարկման հրահանգների պահանջները,

13.2.10. Շահառուին (Ապահովագրված անձին, Լիազորված վարորդներին) ծանոթացնել սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթներին:

13.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

- 13.3.1.** ստուգել ապահովագրված օբյեկտի վիճակը, ապահովագրված օբյեկտի մասին Ապահովադրի կողմից հայտնած տվյալների համապատասխանությունը փաստացի վիճակին, ապահովագրված օբյեկտի պահպանման և շահագործման նորմերի և կանոնների, ինչպես նաև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում դրա պայմանների պահպանումը,
- 13.3.2.** գրավոր պահանջ ներկայացնել Ապահովադրին ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար Էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին գրավոր տեղեկություններ հայտնելու վերաբերյալ,
- 13.3.3.** Ապահովագրական պատահարի առաջացումից հետո ապահովագրական ընկերությունն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան)՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա,
- 13.3.4.** պահանջել, որ Պայմանագիրը/Վկայագիրը ճանաչվի անվավեր, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադրին Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար Էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին,
- 13.3.5.** տալ Ապահովադրին (Շահառուին) պարտադիր ցուցումներ և ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են վնասի չափը նվազեցնելու, իրադարձության հանգամանքները, պատճառները, հնարավոր մեղավոր անձանց որոշելու համար,
- 13.3.6.** որոշել Ապահովադրին (Շահառուին, Տուժողին, Ապահովագրված անձին) ապահովագրական հատուցման վճարման ձևը (դրամական արտահայտությամբ կամ հատուցում համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգում),
- 13.3.7.** երկարաձգել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե Ապահովադրի կամ իր նախաձեռնությամբ նշանակված է կրկնակի/լրացուցիչ փորձաքննություն՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով վնասի չափը որոշելու համար,
- 13.3.8.** հետաձգել ապահովագրական հատուցման մասին որոշման կայացումը, եթե ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառելու հարցով գործը գտնվում է նախաքննության փուլում կամ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ մինչև ապահովագրական պատահարի հանգամանքների և/կամ պատճառի և/կամ վնասի չափի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ստացումը և դրանց ստուգումը,
- 13.3.9.** պահանջելու Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխում կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կնքված Պայմանագրի/Վկայագրի պայմանները փոփոխող հանգամանքների և այնպիսի գործոնների առկայության դեպքում, որոնք կարող են ազդել ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի ռիսկի աստիճանի բարձրացման վրա: Փոփոխում կատարելու Ապահովագրողի

մտադրության, ինչպես նաև Ապահովադրի՝ փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Պայմանագիրը/Վկայագիրն անմիջապես լուծելու Ապահովադրի իրավունքի մասին Ապահովագրողը պարտավոր է նախապես ծանուցել նրան: Եթե Ապահովադրի (Շահառուն) առարկում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու լուծել Պայմանագիրը/Վկայագիրը և հատուցելու Պայմանագրի/Վկայագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները,

13.3.10. որոշել ապահովագրական պատահարի արդյունքում ԱՄ-ին պատճառված վնասի չափը,

13.3.11. միակողմանի լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ համաձայն սույն Պայմանների և ՀՀ գործող օրենսդրության,

13.3.12. բողոքարկել ՀՀ ՃՈ մարմինների, համապատասխան իրավասու մարմինների որոշումները՝ ՀՀ կամ համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով,

13.3.13. ապահովագրական հատուցման ենթակա գումարից հաշվանցել Պայմանագրի/Վկայագրի գծով կետանցված ապահովագրավճարի հերթական մասի գումարը,

13.3.14. պահանջել իրեն հանձնել ԱՄ-ի այն վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերը, որոնց գծով Ապահովադրի (Շահառուն) ստացել է ապահովագրական հատուցում: Ընդ որում հանձնում-ընդունումը իրականացվում է Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված համապատասխան գրավոր փաստաթղթով:

13.4. Ապահովագրողը պարտավոր է՝

13.4.1. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին, բացատրել Պայմանագիր/Վկայագիր կնքելու կարգը, Ապահովադրին տրամադրել Պայմանները, Պայմանագիրը/Վկայագիրը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր փաստաթղթերը,

13.4.2. չիրապարակել Ապահովադրի Ապահովագրված անձի, Շահառուի, նրանց գույքային կարգավիճակի մասին տեղեկություններ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

13.4.3. Ապահովադրին հայտնել ապահովագրական հատուցման վճարման ժամկետների կամ փաստաթղթերի քննման ժամկետների ավելացման մասին,

13.4.4. կատարել սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ:

14. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒՐՈՂԱՑԻԱ)

14.1. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս

պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առ ոչինչ է:

- 14.2.** Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովագրողի (Ապահովագրված անձի, Շահառուի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:
- 14.3.** Ապահովագրողը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 14.4.** Եթե Ապահովագրողը (Ապահովագրված անձը, Շահառուն) իրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովագրողի (Ապահովագրված անձի, Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

15. ԱՆՀԱՂԹԱԴԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

- 15.1.** Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ հեղեղման, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների:
- 15.2.** Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի 15.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:
- 15.3.** Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ԿԱՐԳԸ

- 16.1.** Սույն Պայմանագրի համաձայն կնքված Պայմանագրից/Վկայագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

- 16.2.** Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն և/կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
- 16.3.** Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների և սույն Պայմանների հիման վրա մշակված Ծրագրի/ծրագրերի նկատմամբ:
- 16.4.** Վիճելի հարցեր լուծելու դեպքում սույն Պայմանների հիման վրա մշակված Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ: